




ԱՐՏԱՏՊՈՒԹԻՒՆ ԱՐՕՐՆ-ԻՑ

ՄԻ ՀՆՁԻՒՆԻՆ ՄԻ ԳԻՐ

(ՎԵՎՄՔՐՈՒԹԻՒՆ)

ՍՏ. ՄԱԼԽԱՍԵԱՆՑ

ԹԻՖԼԻՍ

Տպարան «ԷՊՕԽԱ», Գանուխական, № 3.

1910

431.99-4

Մ-16

ՄԻ ՀՆՁԻՒՆԻՆ ՄԻ ԳԻՐ

(ՎԵՎԱԳՐՈՒԹԻՒՆ)

ՍՏ. ՄԱԼԽԱՍԵԱՆՅԻ

Ա. Զ. Գրատար

*24/12 1910 թ.
Ա. Զ. Գրատար*



Թ Ի Ֆ Լ Ի Ս

Տպարան «ԷՊՕԽԱ», Գանովսկայա, № 3.

1910

ՄԻ ՀՆՁԻՒՆԻՆ ՄԻ ԳԻՐ*)

Որևէ լեզվի այբուբենն յօրինողը նպատակ է ունենում յօ-
րինել գրերի մի այնպիսի շարք, որ հնարավորութիւն տայ այդ
լեզվի ամեն մի հնչիւնը արտայայտել այդ այբուբենի միջոցով,
պարզ հնչիւնը՝ մի գրով, բարդ հնչիւնը՝ երկու գրի կապակ-
ցութեամբ: Այս նպատակը իրագործվում է միայն մօտավորա-
պէս, որովհետեւ ամեն մի լեզվի մէջ հնչիւնները, եթէ մարդ
ուշադրութեամբ լսէ՝ ավելի շատ են՝ քան այդ լեզվի մէջ գոյ-
ութիւն ունին գրեր. եթէ լեզվի հնչիւնների ամեն մի նուրբ
զանազանութեան համար յատուկ գիր յօրինվէր՝ այբուբենը
բաղկացած կլինէր ոչ թէ 25—40, այլ գուցէ հարիւրից ավելի
գրերից: Բայց կարգացողները շուտով վարժվում են այս թե-
րութեան. որևէ բառ որոշ գրերով գրված տեսնելով՝ ոչ թէ
նրա ամեն մի գիրը ճշտութեամբ արտասանում են, այլ գրերի
զուգորդութիւնից, բառի կերպարանքից, հասկանում են, թէ ինչ
բառ է, և արդէն բառը արտասանում են՝ ինչպէս արտասան-
վելու է: Եթէ վերցնենք հետեւալ երեք բառերը—«անարատ»,
«անբան», «անգամ», և բնական կերպով արտասանենք՝ կտես-
նենք, որ առաջին բառում մաքուր «ն» է, երկրորդում «մ»,
իսկ երրորդում մի ռնգային արձագանգ միայն կայ. այն- ինչ
մենք երեք բառումն էլ միևնոյն ն գիրն ենք գործածում: Ու-
րեմն լեզվի մէջ հնչիւններն ավելի շատ են՝ քան նրանց ար-
տայայտող գրերը: Բայց կանոնավոր այբուբենների մէջ չէ
լինում դէպք, որ մի հնչիւնի համար յօրինվի երկու կամ ավե-
լի գիր. դա կլինէր անմիտ շռայլութիւն և անհասկանալի հա-
կասութիւն — մի կողմից՝ յատուկ գիր չստեղծել հիմնական
հնչիւնի նուրբ զանազանութիւններն արտայայտելու համար,
իսկ միւս կողմից՝ երկու կամ ավելի գիր ստեղծել միևնոյն
հնչիւնի համար: Այսպէս ուրեմն՝ այբուբենների էական սկզբ-

*) Ներկայ յօդածում գլխագիրը նշանակում է լոկ հնչիւն, անկախ
նրանից, թէ ինչ գրերով է արտայայտվում այդ հնչիւնը. օր. Վ նշանակում
է B, V հնչիւնը, (որ կարող է արտայայտվել վ, ւ, ու գրերով):

բունքն է—ամեն մի հիմնական պարզ հնչիւնի համար՝ մի դիր։ Բառերը, մի անգամ գրի առնվելով՝ ստանում են որոշ կերպարանք և այդ կերպարանքով էլ երևում են գրքերի մէջ սերունդէ սերունդ։ Բայց մեծ զանազանութիւն կայ բառի կերպարանքի, այսինքն նրա գրութեան ձևի, և նրա արտասանութեան կամ հնչիւնի մէջ։ Մինչդեռ բառի կերպարանքը դարերի ընթացքում մնում է անփոփոխ՝ նրա հնչիւնը ենթարկւելած է յարատե փոփոխութեան։ Մարդը, որ ամեն բանի մէջ ձգտում է խնայել ոյժն ու ժամանակը, որքան կարելի է, կ'ործ միջոցում և դիւրութեամբ կատարել որևէ աշխատանք՝ խօսելու ժամանակ էլ բնագոյրէն հետևում է այս ձգտումին. նա սերունդէ սերունդ անգիտակցաբար սղում է երկար բառերը, թեթեւացնում է դժվար հնչիւնները, այնպէս որ նախկին երկար դժվար-արտասանելի բառի տեղ վերջը ստացվում է կարճ և դիւրահնչելի բառ։ Այսպէս, հինգերորդ դարում հնչվելիս է հղել «ճանապարհ» և «ճանապարհ»։ առաջին ձևը մինչև մեր ժամանակ փոփոխվել է «ճանրպարհ», «ճանրպահ», «ճանպահ», «ճամպահ», «ճամբահ», «ճամբայ», «ճամբա», իսկ երկրորդ ձևը՝ ճննապարհ, ճնապարհ, ճնապար, ճնապա։ Միևնոյն ժամանակ ցուրտ կամ շոգ կլիման, տեղի բարձր կամ ցած դիրքը տարբեր կերպով են ազդում խօսողի բերանի բացվածքի, նրա թոքերի գործունէութեան վրայ, և սրա հետևանքն է լինում միևնոյն հիմնական հնչիւնի զանազանակերպվելը ըստ կլիմայի և տեղի դիրքի։ միևնոյն «հաց» հնչիւնը (տաք կլիմայի արտասանութիւն) ցուրտ կլիմայում փոխվում է գրեթէ «հօց», իսկ ցուրտ կլիմայում և բարձր դիրքում «խօց»։ Այսպէս և նախնական անու (ան) հնչիւնը, սկզբից ստանալով հազագային լրացում՝ դարձել է հանու և հետզհետէ վերջից սղվելով դարձել է հալ. «աս-տու-ած» (ас-тоу-ад, երեք վանկ) դարձել է «աս-տու-ած» և «աս-տու-ած»։ առաջին ձևը սղվել է հետզհետէ աստված-աս ված. (և ասպօծ՝ լեռնային գավառներում). երկրորդ ձևը սղվել է հետզհետէ աս-տու-ըծ, աստուծ կամ աստոծ։

Այս հնչիւնափոխութիւնը յատուկ է բոլոր լեզուներին։ Այն լեզուները, որոնք բառերի հնչիւնների փոփոխվելու հետ միասին փոփոխել են և նրանց կերպարանքը, գրելու ձևը՝ այսօր համեմատաբար ավելի լավ վիճակի մէջ են (ուղղագրութեան նկատմամբ) քան նրանք, որոնք պահպանել են գրութեան հին ձևը, իսկ հնչիւնները փոփոխել են. վերջին տեսակին պատկանում են ֆրանսերէնը և մանավանդ անգլիերէնը։

Այս լեզուներով կարդալու համար բավական չէ գրերը գիտե-
նալ. այլ պէտք է դեռ առանձին, բավական բարդ կանոններ
սովորել. անգլիերէնի մէջ այդ էլ բավական չէ. այնտեղ՝ ծա-
նօթ գրերով գրված որևէ բառ ուղիղ կարդալ անկարելի է
առանց բառարանի օգնութեան, որի մէջ մարդ պէտք է այդ
բառը գտնէ, տեսնէ բառի վրայ գրված թվանշանները, և թվա-
նշաններով գտնէ բանալին այդ բառերի ուղիղ ընթերցանու-
թեան: Անգլիացին գրում է «Մհակէսպէարէ», և արտասանում է
«Մէկսպիր». գրում է «վալկ», և արտասանում է «ուօք». ֆրան-
սիացին գրում է բէաւ, և արտասանում է բօօ». գրում է սհաիսէ,
և արտասանում է ղէշըը ևն: Այնպէս որ տասնեակ տարիներ
ի վեր այս երկու քաղաքակիրթ ազգերի մէջ գրական հրա-
տապ խնդիր է՝ բառերի գրութեան կերպարանքը նրանց ար-
տասանութեան հետ համաձայնեցնելու կարիքը. — մի կողմից
հրամայողական պահանջ՝ հեշտացնել ընթերցանութիւնը, գրել՝
ինչպէս հնչվում է. միւս կողմից շվարում — ապա ինչպէս անել
այն բաղմահազար գրականութեան հետ, որ գրված է ավան-
դական ուղղագրութեամբ, և ինչպէս անել ապագայի նկատ-
մամբ, երբ հնչիւնները նորից կփոխվին և նորից առաջ կգայ
անհամաձայնութիւն բարեփոխված ուղղագրութեան և ապա-
գայի նոր սղված հնչիւնների մէջ:

Հայերէնը, ինչպէս ասացի՝ ուղղագրութեան նկատմամբ,
համեմատաբար ավելի լավ վիճակի մէջ է. մեր նախնիքը,
առանց երկար ու խոր մտածելու, հետեւել են այս պարզ մէթո-
դին, թէ բառը պէտք է գրել այնպէս՝ ինչպէս հնչվում է, և
պէտք է հնչել այնպէս՝ ինչպէս գրվում է. այս սկզբունքին
հետեւելով՝ առաջ գրում էին «առնել»՝ երբ այդպէս էլ արտա-
սանում էին. իսկ երբ բառի արտասանութիւնը փոխվեց՝ մի-
ջին դարերում սկսեցին գրել նոր արտասանութեան համաձայն՝
«այնել». այս արտասանութիւնն էլ իւր հերթին սղվեց և վե-
րածվեց երկու ձևի — «ա-նել» և «է-նել», և այս գրութեան ձևերն
էլ մասն գործածութեան մէջ և մնում են մինչև այժմ: Առաջ
արտասանում և գրում էին «այսաւր» (= аѣцавр). յետոյ՝ երբ
արտասանութիւնը սղվեց՝ սկսեցին գրել հետզհետէ «այս-օր»,
«էս-օր» կամ «աւ-օր». վերջը, երբ մեր գիտնականները, «գոե-
հիկ» աշխարհաբարը ազնվացնելու տենչով, գրութեան ձևը,
հակառակ արտասանութեան, վերածեցին միջնադարեան գրա-
բարի ձևին — «այսօր»՝ մեր արտասանութիւնն էլ գրութեան
այդ ձևի հետ գրաբարացավ, մի քանի դարով յետ դնաց. և
մինք ներկայումս այդ բառը, երբ գրում ենք միջնադարեան ձև-

վով՝ միջնադարեան արտասանութեամբ էլ կարդում ենք—«այսօր»։ Իսկ երբ կամենում ենք ժողովրդական արտասանութեամբ կարդալ՝ գրում ենք ոչ թէ «այսօր», այլ «էսօր» կամ «ասօր»։ Ուրիշ խօսքով՝ հայերէնի մէջ բառի ուղղագրութիւնը, ընդհանրապէս, զուգընթաց է գնում նրա արտասանութեան։

Մի պարզ օրինակով ցոյց տամ զանազանութիւնը, որ կայ մի կողմից հայերէնի և միւս կողմից ֆրանսերէնի կամ անգլիերէնի մէջ՝ բառի գրութեան և արտասանութեան նկատմամբ։

Մենք այժմ գրում ենք և արտասանում ենք համարեա միեւնոյն գրութեան ձևով. «այսօր երեկոյեան բան կանեմ, էգուց առաւօտ գիւղ կերթամ»։ Որի մէջ «երեկոյեան», «գիւղ» բառերում և «այսօր» բառի առաջին մասում մեր ժողովրդական արտասանութիւնը զբաւրացել է, հետեւելով գրութեան ձևին. իսկ «կանեմ», «կերթամ», «էգուց» բառերում և «այսօր»-ի երկրորդ մասում զբաւրարի հնչիւնը տեղի է տվել ժողովրդականին, և գրութիւնն էլ համապատասխան է արտասանութեան. այնպէս որ հին և նոր հնչիւնների փոփոխակի ազդեցութեան տակ կազմվել է այդ խօսքը, որի մէջ բառերի գրութեան ձէն ու արտասանութիւնը գրեթէ համապատասխանում են միմեանց։ Իսկ եթէ գոյութիւն ունենար մեր մէջ ֆրանսիական կամ անգլիական գրութեան և արտասանութեան եղանակը՝ մենք այդ խօսքը պարտավորաբար պիտի գրէինք—

«այսաւր երեկոյեան բան կու այնեմ, այգուց առաւաւտ գիւղ կու երթամ»,

և պարտավորաբար պիտի կարդայինք այսպէս։

«էսօր՝ ըրիզվան բան կանեմ, էգուռ՝ աւաւօտ գեղ կէթամ», այսինքն՝ գրութիւնը պիտի պահէինք հին, ավանդական ձևով, առանց ուշք դարձնելու բառերի ժամանակակից արտասանութեան վրայ, բայց պէտք է կարդայինք այժմեան արտասանութեամբ, առանց ուշք դարձնելու գրութեան ձևի վրայ։

Հայերէն ուղղագրութիւնը, ինչպէս վերը նկատեցի, չէ հետեւել այս սիստեմին, այլ շարունակ փոփոխել է ուղղագրութեան ձևերը՝ յարմարեցնելով արտասանութեան, այնպէս որ գրութիւնն ու հնչիւնը միմեանց համաձայն լինին։

Ուրիշ խօսքով ասելով՝ հայերէնը ուղղագրութեան մէջ հետևում է հնչական սիստեմին (գրում է այնպէս՝ ինչպէս հընչվում է բառը), իսկ ֆրանսերէնը պատմականին, որ մենք կո-

շում ենք հին, ավանդութեան ուղղադրութիւն *):

Այս տեսակետից՝ մեր լեզվի ուղղագրական սխտեմին հակասող երևոյթ, անօմալիա է մեր «Վ» հնչիւնի գրութեան երեք տարրեր ձևը (վ, ու, ւ), և լեզուն, բնականաբար, ձըգտում է այդ հակասութիւնից դուրս գալ, մի հնչիւնը մի գրով արտայայտել:—Իհնչպէս պէտք է լուծել այս հարցը:

Հայ ուսուցչական միութիւնը, նկատելով «Վ» հնչիւնի գրութեան սխտեմի մէջ ներկայումս տիրող խառնաշփոթութիւնը՝ 1908 թվի ապրիլին ինձ հրավիրեց մի դասախօսութիւն կարգաւ այդ հնչիւնի ուղղագրութեան առիթով: Դասախօսութիւնս տեղի ունեցավ ապրիլի 17-ին, բաղմաթիվ հետաքրքրւողների ներկայութեամբ: Նրա բովանդակութիւնը տպագրվեց «Մշակում» (1908, № № 92, 93): Դանի որ ներկայ յօդածի նիւթն էլ նոյն այդ հարցն է, իսկ մեր ընթերցողները հազիվ թէ կարողանան գտնել և կարգաւ «Մշակի» նախանցեալ տարվայ այդ երկու համարները՝ կարևոր եմ համարում այստեղ նախ ամբողջապէս ղետեղել այդ յօդածը, որի մէջ հարցը լուսաբանված է հարկավոր չափով, և ապա անել անհրաժեշտ լրացումներն ու եզրակացութիւնը:

«Վ» Հնչիւնի ԳՐՈՒԹԻՒՆԸ ՀԱՅԵՐԷՆԻ ՄԷՁ **)

Հայերէն ավանդական ուղղագրութեամբ «Վ» հնչիւնը արտայայտւում է երեք կերպով.

1) «վ» գրով՝ բառերի սկզբում (բացի ուից առաջ), և բառերի վերջում՝ ուից յետոյ. օր. վարդ, վտանգ, ծով, խօսքով:

2) «ւ» գրով՝ ձայնաւորներից յետոյ, բացի ուից, և բառերի վերջերում՝ բաց վանկերում, օր. աւետիս, հիւանդ, ներուպա, թիւ, հաւ:

3) «ու» գրաւորով՝ բաղաձայնից յետոյ՝ ձայնավորից առաջ. օր. յօդուած, լեզուի:

*) Հայերէնի հնչական, իսկ ֆրանսերէնի պատմական ուղղագրութիւնը պէտք է ընդհանուր մտքով հասկանալ, իբրև այս լեզուների ուղղագրութեան մէջ տիրող սկզբունք. բայց երկու լեզուների մէջ էլ կան շատ բացառութիւններ—հայերէնի մէջ՝ պատմական կամ ավանդական սխտեմով, իսկ ֆրանսերէնի մէջ՝ հնչական սխտեմով գրութիւններ:

**) Փոխված է ուղղագրութիւնը և փոխաբերված է եվրօպական W-ն հայերէն Վ ուի: °

Որովհետեւ «Է» և «Ու» ուրիշ դէպքերում ձայնավոր հնչիւն ունին՝ ուստի հին ժամանակ, ձեռագիրներում և հին տպագրութիւնների մէջ, նրանց ձայնավոր թէ բաղաձայն լինելը որոշելու համար՝ բաղաձայն եղած դէպքում «Է»-ի վրա դնում էին թավ նշան *), իսկ ձայնավոր եղած դէպքում կամ սուղ նշան (օ) կամ ոչինչ. այսպէս ար (=օր), անուր. առանուտ (=առավոտ), թիւ, թիւր. մեղմի, Աստուած: Սակայն այս նշանները կամաց կամաց գործածութիւնից դուրս եկան, և «Ու» գրութիւնը իբրեւ ձայնավոր կամ բաղաձայն կարգալը մնաց վարժութեան:

Սակայն վերջին երկու տասնամեակներում մի նոր ուղղագրական սխտեմ առաջ եկաւ՝ ու=վ գրութեան վերաբերմամբ: Ոմանք մեր հեղինակներից, նկատելով մի կողմից, որ «Ու» երբեմն ձայնավոր է հնչւում (ինչպէս առեւերէն Կ), երբեմն բաղաձայն (վ), և միւս կողմից, որ «յաւիտեան, բաւական, հաւ, թիւ» և այլն բառերի մէջ «Է»-ը վ-ի ձայն ունի՝ յարմար համարեցին «Ու» գրութիւնը բոլոր այն դէպքերում, երբ «վ»-ի հնչիւն ունի՝ սղելով գրել «Է», որով նախ՝ «Ու» գրութիւնը միայն ձայնավոր հնչիւնի համար կը պահվի և թիւրիմացութիւնից կը խուսափվի, և երկրորդ՝ գրութեան սխտեմի հեշտութիւն կը լինի՝ մի աւելորդ գիր (ո) դուրս ձգելով: Այս կերպով սկսեցին գրել—լեզու—լեզւի, Բագու—Բագւայ, թիւ—թւի, գրել, գրում և այլն: Ուրեմն այս գրութեան հետևողները ավանդական «վ»-ի ուղղագրութեան 3-րդ կերպը վերացրին, փոխարինելով նրան երկրորդ կերպով: Այս սխտեմի պաշտպանները, գլխաւորապէս Ղ. Աղայեան և վերջին տարիներս Ն. Ադոնց, որոնք առանձին բրօշուրներ ու յօդածներ նվիրեցին այս հարցին՝ իբրեւ հիմք ընդունում են այն տեսակէտը, թէ «Է» բաղաձայն գիր է, ուստի և նրան կոչում են ոչ ոչ թէ լիւն, այլ «փոքր Է» (փոքր վ):

Հակառակ կարծիք ունէր «Է»-ի մասին հանգուցեալ Ս. Սարգսեանը («Ազուլեցոց բարբառի» հեղինակը), որ ընդարձակ յօդածում ապացուցանելով, թէ «Է»-ը՝ ձայնավոր է՝ սխալ էր համարում Ղ. Աղայեանի մտցրած սխտեմը և=փոքր վ, և առաջարկում էր «վ» հնչիւնը արտայայտելու համար ոչ թէ գործածել իբրեմն «վ» և երբեմն «Է» ըստ Աղայեանի, այլ միայն «վ» բոլոր դէպքերումն էլ:

Ս. Սարգսեանի փոտական և լուրջ առաջարկութիւնը ար-

*) Տպարանում թավ նշանի գիր չը լինելու պատճառով գործ ենք ածում երկար ('):

ձագանգ չգտալ, և «Լ»-ով գրութիւնը սկսեց ավելի և ավելի արժարժովել շնորհիւ Դ. Աղայեանի գեղեցիկ դասագրքերի և շնորհիւ այն առերևոյթ հեշտութեան ու միօրինակութեան, որ այդ գրութիւնը մտցնում էր մեր ուղղագրութեան մէջ:

Սակայն այս գրութիւնը նորանոր դժուարութիւնների և չարիքների պատճառ է դառնում, ուստի ես յանձն առայ, ուսուցչական միութեան վարչութեան հրավերով, լուսաբանել այս խնդիրը՝ որքան ձեռնհաս եմ:

Տարօրինակ թող չը թվի՝ եթէ ասեմ, թէ այս հարցը չէ պատկանում լոկ հայոց լեզվին և ուղղագրութեանը, այլ բոլոր լեզուներին, և այնքան հին է՝ որքան առասարակ լեզուները: Ուստի բնական է, այս հարցը հայերէնի մէջ լուծելու ժամանակ, ուղղագրութեան առնել, թէ ինչպէս են նրան լուծել ուրիշ ազգեր ու գրականութիւններ:

Նախ և առաջ անհրաժեշտ է որոշ հասկացողութիւն կազմել, թէ սկզբնապէս ինչ տառ է «Լ»-ը և ինչից է առաջ գալիս նրա երկդիմի՝ երբեմն ձայնավոր, երբեմն բաղաձայն հընչիւնը:

Բազմաթիւ անուրանալի փաստեր ապացուցանում են, որ «Լ» սկզբնապէս եղել է ձայնավոր տառ և հնչիւնով համապատասխան յունարէնի իւփսիլօնին (ֆրանսերէն Ա):

Մեր հին հեղինակները վկայում են, թէ ս. Մեսրոպ հայերէն գրերը դասավորեց յունական այբուբենի կարգով: Եւ յիշաւի, երբ կարգով գրում ենք մեր գրերը—ա, բ, գ, դ... տ, ր, ց, ի, փ, ք, և նրանց տակ դարձեալ կարգով գրում ենք յունական այբուբենի գրերը (ալֆա, բէտա, գամմա, դէլդա... տառ, —, —, իւփսիլօն, ֆի, խի), տեսնում ենք, որ հայերէն «Լ»-ը զուգահեռակցում է իւփսիլօնին, իսկ իւփսիլօնը (Ա նուրբ) անտարակոյս ձայնավոր տառ է: «Կերիակէ» (հայացած ձեռով՝ կիւրակէ=տէրունական) բառում կ-ի և ր-ի մէջ գործ է ածւում իւփսիլօն և կարգացւում է կիւրիակէ (ֆրանս. *curiaké*) և ոչ թէ կվրակէ, և այսպիսի հազարավոր օրինակներ: Իսկ եթէ իւփսիլօնը ձայնավոր է՝ ուրեմն ձայնավոր է և նրան համապատասխանող հայերէն «Լ»-ը:

Ինչպէս յունարէնում իւփսիլօնը ուրիշ ձայնավորների հետ կազմում է երկբարբառներ՝ նոյնպէս և հայերէնում միևնոյն ձայնավորների հետ միևնոյն երկբարբառներն է կազմում Լ-ը. օր. յուն. *oy*=հայ ու=ֆրանս. *ou*, յուն. *ay*=հայ աւ=ֆրանս. *au*, յուն. *ey*=հայ եւ=ֆրանս. *eu*:

Այս գրի անունը՝ Լիւն, որ սենք արտասանում ենք թեթև

հաղագով ինչպէս հիւն՝ ձայնավոր տառի արտասանութիւն ունի (ֆրանս. *une*), և ոչ բաղաձայնի՝ ինչպէս վիւն: Ներսէս Շնորհալին այբուբենի գրերի կարգով սկսվող տաղաչափութիւնների մէջ՝ «ւ» գրով տողը սկսելու համար գրել է «ւիւրաքանչիւրոց լիւսմամբ խուռն ախտից լիծեալ է հոգիս», ուրեմն նա «ւ»-ը արտասանելիս է եղել ինչպէս ֆրանսերէն *u*, *hu*, բայց ոչ ինչպէս *վ*:

Մեր հին հեղինակները վկայում են, որ ս. Մեսրոպի այբուբենը ունէր 7 ձայնավոր. արդ՝ քանի որ ս. Մեսրոպի այբուբենում օ ձայնավորը չը կար՝ ուրեմն ձայնավորներ մնում էին ա, ե, է, ը, ի, ո, ւ, ուրեմն և ւ ձայնավոր է եղել:

Ձեռագիրների մէջ երբեմն-երբեմն պատահում են հետաքրքրական գրութիւններ—«հւսիս» կամ «հւսւս», «կւրակէ», «հւղէ», «ծգւպտոս», «Հուփսիմէ», «Անտուքոս», «Բաբւոյն» և այլն, որոնց մէջ «ւ» անպայման ձայնավորի հնչիւն ունի՝ նման յունարէն իւփսիլօնիս=ֆրանս. *u*:

«Սուրբ», «կուռք», «իւր», «հւղ» և այլ հաղարավոր դէպքերում «ւ» ձայնավոր է, և ոչ թէ բաղաձայն վ, այլնպէս պէտք է ասէինք սովրբ, կովուք, իվր, հիվդ...

Նախնական «եւ» երկբարբառը փակ վանկում, «ալեւը», «բււր», «հարեւը», «եւղ» և այլ բառերում, արտասանվելիս է եղել, ինչպէս և յունարէնում՝ իբրև ձայնավոր,=ֆրանս. *eu*, որի ապացոյցն այն է, որ այդ բառերի ուղղագրութիւնը փոխելիս գրել են ալիւր, բիւր, հարիւր, իւղ, և ոչ թէ ալեվր, բեվր, հարեվր, եվղ, և ժողովրդական բարբառներում դրանք փոխվել են պարզ ձայնավորների—ալիր, ալուր, հարիր, հարուր, եղ, և այլն: Այս փաստերը բավական են ցոյց տալու, որ մեր «ւ»-ը սկզբնապէս եղել է ձայնավոր=իւփսիլօնիս=ֆրանս. *u*:

Յունարէնը «վ» հնչիւնը արտայայտելու համար ունէր նախապէս դիգամմա (=սեմական վավ), որ յետոյ դուրս ընկավ այբուբենից, փոխարինվելով ֆի-ով: Իսկ իւփսիլօնը ձայնավոր էր, թէ առանձին գործածվելիս և թէ երկբարբառի մէջ:

Յունարէն այբուբենը հիմք դարձավ լատինական այբուբենին, և սրանից առաջ եկան եւրոպական այբուբենները: Արդ՝ լատինական այբուբենը փոխ առավ յունաց դիգամման իբրև *v*, իսկ յունաց իւփսիլօնը (*v*) իբրև ձայնավոր (հայերէն ու), և գրում էր *dvrys*, *solvtvm*, *avrym*, *silva*, ու կարգում՝ դուռուս, սօլուտում, աուռում, սիլուա:

Այդ իւփսիլօն=և հնչիւնը մի զարմանալի յատկութիւն

ունի բոլոր լեզուների մէջ, այսինքն, որ թէ երկբարբառների մէջ և թէ առանձին գործածվելիս՝ ուրիշ ձայնավորից առաջ «վ» հնչիւնի է փոխվում. Dasileys (արքայ) ուղղականից սեռականը դառնում է basilevos. լատինական նախնական եռավանկ si-lu-a (սի-լու-ա=անտառ) փոխվում է երկու վանկ silva (սիլ-վա). քառավանկ dis-so-lv-o փոխվում է եռավանկ dissolvo. զինդերէն bazu (=բազուկ) բառի գործիականը դառնում է bazvâ, ahu-âo դառնում է ahvâo. սանսկրիտերէն tanu ուղղականից տրականը դառնում է tanwe, գործիականը tanwa. madu asti նախադասութիւնը դառնում է madwaswi (=մեղր է). Այսպէս և հայերէն նախնական հնչիւնը դաւիթ (=գաօրթ) դարձել է գավիթ, լեզու+ի դարձել է լեզվի, Բագու+այ դարձել է Բագվայ: Նոյնն է և սեմական լեզուների մէջ, որոնց միեւնոյն վավ գիրը երբեմն ձայնավոր է (ու, օ) և երբեմն բաղաձայն (վ),

«ի» և «ու» հնչիւններ Վ-ի փոխվելու այս յատկութիւնը հասկանալի կդառնայ մեզ՝ եթէ ուշադրութիւն դարձնենք, որ այդ տառերը արտասանելու ժամանակ շրթունքները մօտենում են իրար. իսկ երբ ուրիշ ձայնավոր արտասանելու համար այդ հուպ եկած շրթունքների դրութիւնը հարկավոր է լինում փոխել, օրինակ ւ-ա, ու-ա արտասանելու համար՝ շրթունքների սրբազ շարժումից օդի ուժեղ հոսանք է դուրս գալիս հուպ եկած շրթունքների միջով, այսինքն ստացվում է «վ» հնչիւն: Բավական է երկու-երեք անգամ արագ կրկնել Բագու-ւայ, Բագու-ւայ, որ՝ անզգալի կերպով այս եռավանկ բառը դառնայ երկավանկ «Բագ-վայ»: Ուրեմն «ւ» և «ու» հնչիւնների «Վ-ի փոխվելը բնական, օրգանական երևոյթ է ոչ միայն մեր, այլ և բոլոր լեզուների մէջ: Ինքն ըստ ինքեան ձայնավոր «ւ» կամ «ու»-ն որոշ դէպքերում փոխվում է բաղաձայն «Վ»-ի:

Հիմա հետաքրքրական է տեսնել, թէ ինչպէս են վարվել ուրիշ ազգերի այբուբենները՝ այս երկձայն «ւ» և «ու» հնչիւնները արտայայտելու համար:

Սանսկրիտ և զենդ այբուբենները ի բնէ ունէին յատուկ նշանադրեր «ու» ձայնավորի համար և «վ» բաղաձայնի համար: Ուստի ամեն անգամ, երբ արմատական «ու» ձայնավորը ուրիշ ձայնավորի առաջ պատահելիս բաղաձայնի հնչիւն էր ստանում՝ ուղղակի գրում էին «վ» բաղաձայն, առանց ուշադրութիւն դարձնելու բառի ստուգաբանական ձևի ուղղագրութեան վրա: Այսպէս բազ-ու, բայց բագ-վա, տան-ու — տան-վե, տան-վա. կաւս (կով)—կավյա (կովային):

Յոյները, որ «Վ» հնչիւնը արտայայտում էին հին ժամա-

նակ դիզամմայով՝ «ւ» ձայնաւորը «վ»-ի փոխվելիս՝ «ւ»-ի փոխարէն գործ էին ածում դիզամմա.— բասիլեհս, բայց բասիլեւօս (արքայ). նաւս, բայց նէվօս (նաւ):

Հատինացիք, որ յունական տրուբենն ստացան առանց «վ» հնչիւնն արտայայտող տառի, նկատելով «ւ» հնչիւնի երկձայն լինելը՝ շուտով գործնական միջոց գտան. միկնոյն Վ (իւփսիլօն) գիրը փոքրիկ ձևափոխութեան ենթարկելով՝ կաղմեցին մի գրից երկու գիր, Վ և Ա, առաջինը պահելով բաղամայնի համար (վ), իսկ երկրորդը ձայնավորի համար (ու). այնպէս որ փոխանակ առաջվայ նման գրիւն servvs (ստրուկ), pluvia (անձրեային), սկսեցին գրել servus, pluvia. յունական նաւս (նաւ) բառը, «ի» ձայնաւորից առաջ գրեցին Վ-ով navis, իսկ բաղամայնից առաջ Ա-ով՝ naufragium (նաւաբեկութիւն):

Հատինական այբուբենի հետևողութեամբ եվրոպական կենդանի լեզուներն էլ ունեցան «վ» և «Վ» առանձին գրեր՝ ձայնավորի և բաղամայնի համար, որոնք միկնոյն յունական իւփսիլօնից են ծագում, և, լատիններէնի նման, առանց ստուգաբանական ուղղագրութեան հետևելու գործ են ածում փոփոխակի այս երկու գրերը՝ նայելով արտասանութեան: Օրինակ ֆրանսերէն միկնոյն նաւս—navis արմատից ծագած բառերը գրում են navire և naufrage, janus և janvier (յանոս և յունվար), je meus (չարժում եմ) և nous mouvons (չարժում ենք):

Այսպէս ուրեմն տեսնում ենք, որ հնդկաեվրոպական այբուբենները դեռ հաղարավոր տարիներ առաջ վճռել են «ւ» երկձայն հնչիւնի հարցը կտրուկ կերպով.— առանց ուշադրութիւն դարձնելու բառի ստուգաբանական ուղղագրութեան վրա՝ «վ»-ով են արտայայտել այդ տառը՝ բաղամայն հնչվելիս, և «ու»-ով՝ ձայնավոր հնչվելիս. իսկ լատինական այբուբենը, որ սկզբնապէս չունէր «վ» արտասանութեան յատուկ գիր, և նրա հետևողութեամբ բոլոր եվրոպական լեզուները՝ նոյն Վ գիրը բարեփոխելով՝ ստեղծել են երկու գիր—Ա՝ ձայնաւոր և Վ՝ բաղամայն, այսինքն նոյն գրի տարբեր հնչիւնների համար հնարել են տարբեր գրեր. մտցրել են լատարոշման սկզբունք: Միայն սեմական այբուբեններն են, որ մինչև հիմա պահել են իրանց ավանդական վավը՝ թէ՛ ձայնավորի համար և թէ՛ բաղամայնի, և այս վերջին գրութեան սխատմով (սեմական այբուբենով) օգտվում են այժմ թուրքերը, պարսիկները, արաբները և այլն:

Այս միկնոյն սեմական սխատմին հետևողութիւն է և պ. Աղայեանի մտցրած ըէֆօրմը, որով «ւ»-ը կամ «փոքր վ»

վալի, և՛ բաղաձայն է (առաջան, լեզուի) և ձայնավոր (տուն, իւր)։

Պ. Աղայեանի մտքրած ընթերցումը ոչ միայն հեշտութիւն ու միօրինակութիւն չի մտցնի մեր գրութեան մէջ, այլ և նորանոր թիւրիմացութիւններ ու չարիքներ առաջ կբերէ։

Որքան որ թէ աշակերտները և թէ մեծերը ընտելանան «ւ»-ը «փոքր վ» կոչելու և զգալու՝ այնքան կզժվարանայ մեր լեզվի ուղղագրութիւնը, և երևան կգան նորանոր գրութեան ձևեր։ Արդէն աշակերտները գրում են բոլորօրին (այսինքն՝ բոլորովին), կո. (այսինքն կով), ւարել (=վարել), ւնաս (=մնաս)։ Եւ չէ կարելի ոչ նրանց մեղադրել և ոչ բացատրել թէ սխալվում են. յիշալի, երբ նրանք գրում են ամենեւին, բնաւին, ինչո՞ւ չգրեն և բոլորօրին. եթէ գրում են հաւ, թիւ, ինչո՞ւ չգրեն և կո. եթէ գրում են աւաղ, աւաղ, աւան, ինչո՞ւ չգրեն և ւաղ, ւաղ, ւան։ Ուրեմն ընական, անխուսափելի կերպով «ւ» = «փոքր վ»-ն կսկսէ տիրապետել մեր ուղղագրութեան մէջ բոլոր այն դէպքերում՝ երբ «վ» է լսվում։ Բայց ի՞նչ կը լինի սրա հետևանքը։

Նախ այն, որ մի գիր, «վ», որ պարզ անկասկածելի հնչիւն ունի՝ կգառնայ աւելորդ, և վաղ թէ ուշ հարկավոր կլինի նրան այբուբենից դուրս ձգել։

Երկրորդ այն, որ մենք անընդունակ կը դառնանք հայերէն կարդալու։ Որովհետեւ քանի որ մնում են ու = y, և իւ = io (ինչպէս «տուն» «իւր» բառերի մէջ), այսինքն քանի որ «ւ» գիրը որոշ տեղերում կշարունակէ պահել ձայնավորութիւնը՝ մենք կզժվարանանք ճիշտ կարդալ գրված բառը. օրինակ, ի՞նչպէս պէտք է կարդալ «թիւն», «աղիւս», «ճչիւն» — ոչ ոք չէ կարող ասել, դրանց կարելի է կարդալ և՛ ձայնավոր (ТЮН, аГЮС...), և բաղաձայնով — թիմն, աղիվս, ճչիմն։ Քսաներորդ դարի սկզբում, լեզվագիտութեան բարձր զարգացման ժամանակ, ընթերցում մտցնել մի այբուբենի մէջ, և հետևանքը լինի այն՝ որ մենք չկարողանանք ճիշտ կարդալ մի գրվածք, այլ պարսկական, թուրքական այբուբենին վիճակին ենթարկվենք ու ասենք. «ասանկ ալ կըլլայ, անանկ ալ»։

Երրորդ այն, որ հետզհետէ վարժվելով «ւ»-ը իբրեւ վ կարդալու՝ մենք կսայթաքենք և կսկսենք «քուն», «տուն», «իւր» բառերը կարդալ քոմն, տոմն, իվր, ինչպիսի յուսալի ընթերցանութեան նշաններն արդէն երևում են փոքր աշակերտների մէջ։ Պարզ է, որ այս շփոթութիւնից դուրս գալու համար լեզուն ստիպված պէտք է լինի դուրս ձգել նաև ու = y,

իւ=ԵՅ ուղղագրութիւնը և ուրիշ նշաններ հնարել այդ երկու ձայնավորներն արտայայտելու համար:

Ուրեմն պ. Աղայեանի նորամուծութեան անխուսափելի հետևանքները կլինին.—

1) Ստեղծել երկու նոր գիր՝ ձայնավոր ու և իւ հնչիւնների համար.

2) Այբուբենից դուրս ձգել մի պարզ, անկասկածելի հընչիւն ունեցող գիր,—«վ»-ը, իբրև ավելորդ.

3) Զրկվել հնարավորութիւնից՝ արտայայտելու նախկին «ւ» (ֆրանս. u) հնչիւնը, որ յաճախ պատահում է մեր գաւառաբարբառների, ինչպէս երբեմն և գրական լեզվի մէջ:

Եւ այս բոլորի հիմքը կաղմում է այն սխալ հայեացքը՝ թէ «ւ»-ը բաղաձայն է:

Եթէ «վ» հնչիւնի հայերէն ավանդական ուղղագրութիւնը հարկ էր բարեփոխել՝ ապա մենք պէտք է առաջնորդվէինք հնդկա-եվրոպական և քաղաքակիրթ ազգերի օրինակով, որոնց հետ կապված ենք թէ մեր լեզվով և թէ այբուբենով: Հինգերորդ դարի սկզբում, երբ լեզվագիտութիւն չը կար և հայերէնը պաշարված էր ասորական լեզվի և գրականութեան աղդեցութեամբ՝ ս. Մեսրոպը այնքան ոյժ ունեցավ (շնորհիւ յոյն Հռոփանոսի ազդեցութեան), որ մեր այբուբենը հնարելիս՝ կըտրեց յարաբերութիւնը ասորական այբուբենի հետ և հետևեց յունական—եվրոպական այբուբենին և ավելացնելով ի միջի այլոց «վ» գիրը՝ ստեղծեց մի կատարեալ այբուբեն, որ լեզվի այն ժամանակվայ կարիքներին լիովին բավականութիւն էր տալիս: Ս. Մեսրոպ և նրա ժամանակակիցները գըրում էին «վտանգ», «վարել», որովհետև «վ» էին հնչում. գըրում էին «լեզուի», «Աստուած», որովհետև արտասանում էին լեզու-ի, Աս-տու-ած—երեք վանկ. գըրում էին «աւազան», որովհետև արտասանում էին մօտավորապէս աօազան. գըրում էին «թիւ», որովհետև արտասանում էին մօտավորապէս թիւ.յ. գըրում էին «հարեւր», որովհետև արտասանում էին ինչպէս ֆրանսերէն hareur և այլն: Իսկ այժմ, երբ «ւ» ձայնավորը որոշ դէպքերում, լեզվի բնական օրէնքի համաձայն, թափացել է, «վ»-ի հնչիւն է ստացել, երբ կարիք է զգացվում «վ» հնչիւնի գրութեան ձեռն պարզել, ուղղագրութիւնը յարմարեցնել արտասանութեան՝ մենք փոխանակ եվրոպական ուղղագրութեան հետևելու, այս քսաներորդ դարում, դնում ընկնում ենք նախամեսրոպեան սեմական ուղղագրութեան անորոշ խառնակ սիստեմի մէջ: Սա պատիւ չէ բերում մեր քաղաքակիրթութեան:

Հատինացիք և եվրոպացիք, «Վ» հնչիւնի համար յատուկ գիր-
չունենալով՝ ստեղծեցին, իրանց այբուբենի մէջ ավելացրին
այդ գիրը. իսկ մենք պատրաստ ունենալով «վ» գիրը անկա-
կածելի հնչիւնով՝ նրան դէն ենք ձգում և դիմում կասկածելի
«ւ»-ին, թոյլ տալով որ նա միաժամանակ և՛ ձայնավոր լինի
(տուն, իւր), և բաղաձայն (աւազան, թիւ, լեզու): Եթէ հար-
կավոր է ըէֆօրմ մտցնել մեր «վ» հնչիւնի ուղղագրութեան
մէջ, արմատական, անշփոթելի ըէֆօրմ—ձանապարհը պարզ է
ամեն մի չնախապաշարված մտքի համար: Մեր այբուբենի մէջ
պատրաստ «վ» գիրն ունինք, էլ ինչո՞ւ ենք պատէ—պատ ընկ-
նում: Եթէ մենք գրում ենք «վարել», «վան», «վանք», «վա-
ղել», «ծով», ինչո՞ւ չգրենք նաև ավարել, ավան, աղվանք,
ավազ, թիվ, դործվել, գործված, և այլն, քանի որ այս վեր-
ջին բառերում ցերկայուսմ հնչիւնները նոյնն են, ինչ որ ա-
ռաջիններում:

Այսպիսի ուղղագրութիւնը նորութիւն էլ չէ. դեռ 10—11-
րդ դարերից սկսած թէ՛ արձանագրութիւնների և թէ՛ գրքերի
մէջ պատահում են «վ»-ով գրութիւններ անգրագէտ գրիչ-
ներից (այսինքն՝ որոնք որ նախապաշարված չէին ավանդա-
կան ուղղագրութեամբ): Այսպէս մենք պատահում ենք արձա-
նագրութիւնների մէջ. «քվերք», «թվարերութեան», «թվիս»,
«տվաք», «տվի», «թագավորութեան», «Դավիթ», «Դավթի»,
(«Այրարատ», 443, 271, 261, 187, 273, 61. «Շիրակ» 134,
138): Զեռագիրների մէջ—«վաղփին», «ծարուրվին», «լուաց-
վին», այլվայ, ի լվէն (=լուից), վի (ուի). («Վան խաբող
աղուեսուն», հրատար. Մառի, 188, 234, 180, 184, 185, 191,
97). «դժվարին, կեղծայվոր, սանդրվեցէք» («Վարդան Այ-
գեղացի», հրատ, Մառի, 36): Թղթակցութիւնների մէջ—
«արտասվական, անվանի, չիմացվի, դլխավորացդ, խնդրվաց-
կին, հավանած, հավատն, պատվական, մեծավորաց» (Եզեան,
Спошениа Петра Вел., 369, 371, 393...): Սայեաթ Նովա—
«պարքիվէ», «չի խրատվի», «խիվըն», «տիվըն», «սիվըն»,
«ավիտարանի», «առչիվըն», «թաքավուր», «դավ», «ավտալ»,
«ավաղ» (Քնար Հայկ. 458, 453): Այսպէս նաև Թուրքիջ,
Գուրջի Նաւէ և այլ աշուղներ:

Մխիթարեանները դեռ 19-րդ դարի սկզբում, աշխարհա-
բար գրելու ժամանակ, հետևում էին այս գրութեան կերպին.
«Տարեթերթ», «Դիտակ Բիւզանդեան» թերթերում պատա-
հում ենք «ծեծվելով», «տվալ», «սահթըվան», «պատմըվին»,
«գոցվի», «բացվի», «պատվական», «առտվանց», «իրիկվան» և այլն:

Սայիաթ-Նովայի գիտնական հրատարակելը՝ բժ. Հախ-վէրդեան կրավորականի բոլոր ձևերը գրում էր «վ»-ով—«դաս-վոր» լուսատուովին, քաշվելով, «զըզվին»։ (Այսպէս է գործածում և «Մշակը»)։ Խաչ. Արովեան «վ» է գործածել բոլոր տեղերում, ուր մենք ավանդական ուղղագրութեամբ «ու» ենք գրում «վ» հնչյւնիս.—փակվել, թեքվել, Լուվա, արծվի, գիշերվան, իրիկվան, թվանքը և այլն։

Իսկ Խորէն Ստեփանէն իր «Հայկական աշխարհում» ավելի արմատական կերպով է վարվել և ամեն տեղ, ուր հնչւում է «վ» հնչիւնը՝ գրել է վ—Աստված, յօգված, նալ, թիւ, խօսվել, խօսված և այլն։

Վերջապէս այս ուղղագրութիւնը գիտական տեսակէտից պաշտպանել է, ինչպէս ասացի, և Սարգիս Սարգսեանը ինչնական թվականներում «Մուրճ» ամսագրում առանձին յօդվածով, որը դժբախտաբար չկարողացայ գտնել ու նորից կարդալ այս դատախօսութեանը պատրաստվելիս։

Եթէ մենք ընդունենք սկզբունք—ամեն տեղ «վ» լսվելիս «վ»-ը գործածել՝ այն ժամանաղ «ւ»-ն կմնայ իբրև զուտ ձայնավոր՝ ֆրանս. Ա-ի հնչիւնով, և կկազմէ երկբարբառ ու և իւ ձայնավորները. սրանով «վ» հնչիւնի ուղղագրութեան դարավոր գորդեան հանգոյցը մի անգամից արմատական կերպով կլուծվի։

Բայց այս խոր համոզումն ունենալով հանդերձ՝ ես ոչ միայն խորհուրդ չեմ տալիս որևէ մէկին հետևելու այս ուղղագրութեան, այլ ինքս էլ չեմ հետևում—մի ուրիշ սկզբունքով, այն է, որ անհատական նախաձեռնութիւնը ուղղագրական հարցերում շատ վտանգավոր, ուրեմն և զգուշալի է։

Ես կարծում եմ, որ ոչ ոք իրան չը պէտք է թոյլ տայ իր ստեղծած սխալ թէ ուղիղ տեսակէտի համաձայն՝ քմահաճաբար նոր ուղղագրութիւն մտցնել լեզվի մէջ, մանավանդ դասագրքերի մէջ, և, այսպէս ասած, բռնի կերպով ուտեցնել աշակերտներին։ Եթէ անհատական նախաձեռնութեան ըսկզբունքն ընդունենք՝ այն ժամանակ ամեն մէկն իրան իրավունք կհամարէ գրել բառերը այնպէս՝ ինչպէս իրան ուղիղ և լավ կթվի, և հետևանքը կլինի մի նոր իսկական բարեկունեան խառնակութիւն գրութեան մէջ.—մենք միմեանց գրածը չենք կարողանայ կարդալ և հասկանալ։ Անհատական ճաշակով ղեկավարվելով՝ «Թագաւոր» բառը կսկսենք գրել—Թագաւոր, Թագավոր, Թագաւոր, Թագավոր, Թագավոր, Թագաւոր և այլն. «յետոյ» բառը կսկսեն գրել—յետո, ետո,

հատոյ, յիտո, հետո, հետո, հետոյ և այլն. այս գրութիւններից իւրաքանչիւրը կունենայ իր *raison d'être*-ը. բայց թնչ կդառնայ հայերէն ուղղագրութեան վիճակը: Ուստի եթէ ես անհատապէս, կամ մի քանիսն էլ ինձ հետ, մտցնէինք մեր գրութեան «վ»-ական սխառեմը՝ եղած տարբեր ուղղագրութիւնների մէջ մի նորը կազմեալէինք. փոխանակ յօնքը շինելու՝ աչքն էլ կհանէինք:

Եթէ մենք չունինք մի գիտական հեղինակավոր հիմնարկութիւն կամ մի վարչական իշխանութիւն, որոնք բոլորիս համար պարտադիր դարձնէին այս կամ այն ուղղագրութիւնը, երբ մենք այս հարցում ազատ ենք՝ չպէտք է մեր ազատութիւնը անիշխանութեան վերածենք, և ամեն մարդ իր ուզածի պէս վարվի. պէտք է մենք ցոյց տանք բավականաչափ խելահասութիւն, ցոյց տանք, որ ընդունակ ենք ինքնավարելու՝ առանց անարխիայի մէջ ընկնելու:

Ուստի ես առաջարկում եմ հետևեալ միջոցը. Ուսուցչական Միութիւնը, որի հրավէրով ու նախաձեռնութեամբ տեղի ունեցավ այսօրվայ դասախօսութիւնը՝ թող յանձն առնէ հրավիրել ձեռնհաս, մասնագէտ անձերից մի սակավամարդ մասնաժողով, որ բազմակողմանի կերպով քննելով այս ուղղագրական հարցը, ինչպէս և մի երկու ուրիշ հերթական ուղղագրական հարցեր՝ պատրաստէ պատճառաբանված զեկուցում. այնուհետև հրավիրվի բազմամարդ ժողով հայ գրական պրծիչներից, որ լսելով ու քննելով այդ զեկեցումը՝ ժողովով ընդունեն առաջարկված ուղղագրութիւնը: Գրական մարդկանցից ու մասնագէտներից բաղկացած բազմամարդ ժողովում ընդունված ուղղագրութիւնը անշուշտ բարոյական հեղինակութիւն կստանայ ազգի մէջ, և փոքրամասնութիւնը կամայ թէ ակամայ կենթարկվի մեծամասնութեան ընդունած և ընդհանրաճանաչու շանս ունեցող ուղղագրութեան:

Այս բովանդակութեամբ խօսած իմ բեֆէրատի եղբակացութիւնն ընդունեց ժողովը և յանձնարարեց Ուսուցչական միութեան, որի նախաձեռնութեամբ տեղի ունեցավ այդ ժողովը՝ հրավիրել ձեռնհաս անձերից մի ժողով, որ քննութեան առնէ «վ»-ի ուղղագրութեան և մի քանի այլ հարցեր և իւր պատճառաբանված զեկուցումը ներկայացնէ ավելի բազմամարդ գրական մարդկանց ժողովի քննութեան և ընդունելութեան: Եւ Ուսուցչական Միութեան նախագահն, ինչպէս և վարչութիւնը

ընդունեցին այդ յանձնարարութիւնը, բայց ժողով հրավիրելու դործը ձգձգվեց մինչև այսօր։ Մի քանի անգամ ես հետաքրքրվեցի իմանալ, թէ երբ պէտք է ժողով հրավիրվի, բայց գոհացուցիչ պատասխան չստացայ։ Այն-ինչ 1909 թվի սկզբից լոյս տեսավ Ուսուցչական Միութեան օրգան շնորհալոց» ամսագիրը, որի մէջ խմբագրութիւնը յայտնում էր, թէ «Ժամանակավորապէս, ընդունել է «Է»-ով ուղղագրութիւնը... Երևի այս բառը գործածելիս խմբագրութիւնը դեռ հավատում էր, թէ «Վ»-ի ուղղագրութեան վերաբերեալ ժողովը դեռ պիտի հրավիրէ։

Այս կերպով ժողովը ջուրն ընկավ, իսկ «Է»-ով գրութիւնը, որի սխալ և ֆնասակար լինելը չափազանց բացայայտ դարձավ իմ դասախօսութիւնից յետոյ՝ «Ժամանակավոր» պատմութեանով եկավ բազմեց շնորհալոց»։ Իսկ չարիքը, որ ես գուշակել էի իմ դասախօսութեան մէջ՝ օրէցօր սկսեց աճել.— ներկայումս ոչ թէ մի-երկու, այլ շատ ուսուցիչներ (նոյն-իսկ «Է»-ականներ) գանգատովում են, որ աշակերտները չեն դուռ գնալով իմ լեզուի և «Է»-ի մէջ, և անդադար սխալներ են անում. գրում են որու (փխկ. որով), ծուր (փխկ. ծով), սխալ են կարդում հոյն (փխկ հուն, ձիւն (փխկ. ձիւն), առովի (փխկ. առուի), այսինքն՝ Լիւնը, որին ասում են «փոքր վ», շփոթում են իսկական վ-ի հետ, որից առաջ է գալիս սխալ գրութիւն և սխալ ընթերցանութիւն։

Եւ ցավօք սրտի համոզվեցի, որ մեր մէջ չէ կարելի յոյս դնել որեւէ հարց օրինական ճանապարհով լուծելու վրայ։ Ես համոզվեցի, որ սխալ ու ֆնասակար ուղղագրութեան դէմ կռիւն համար անգործ է քննադատութիւնը, բողոքը. նրա դէմ կռիւն միակ գործնական ճանապարհն է գործածել ուղիղ և կատարեալ ուղղագրութիւն, մրցութեան հանձն վ-ով գրութիւնը գոյութիւն ունեցող միւս գրութիւնների հետ և միջոց տալ, որ կարգացող հոյ հասարակութիւնը գործնականի մէջ ճանաչէ նրանց իւրաքանչիւրի առավելութիւնն ու պակասութիւնը և ընտրէ այն սխալները, որ այս մրցութեան մէջ յաղթանակը կտանի իւր պարզութեամբ, հեշտութեամբ ու նպատակայարմարութեամբ։ Ուստի «Արօրի» խմբագրական խորհրդակցութեան ժամանակ, երբ անդամներից մէկն *) առաջարկեց «վ»-ով գրութեան սխալի մէջ ընդունել՝ ես, ինչպէս և խմբագրու-

*) Նա ներկայ էր եղել իմ 1908 թ. ապրիլի դասախօսութեանը և համոզվել էր «վ»-ով գրութեան գերազանցութեան մէջ։

թեան անգամներէից ուրիշ երկու հոգի, ուրախութեամբ ընդունեցինք այդ առաջարկը, և բավական թեր և դէմ խօսակցութիւնից յետոյ (որովհետեւ երկու անգամ տատանվում էին) որոշեցինք Աբորում հետեւի այս ուղղագրութեան:

Ինչո՞ւն է այս ուղղագրութեան էութիւնը:— Բոլոր այն տեղերում, ուր «Վ» հնչիւնը մենք արտայայտում էինք «վ», «ու», «ւ» գրերով՝ գործածել միայն «վ», այսինքն՝ մի հնչիւնի արտայայտութեան համար գործածել մի գիր: Փոխանակ գրելու «վան» և «նաւ»՝ գրել վան, նաւ. փոխանակ գրելու «հով» և «հաւ»՝ գրել հով և հաւ. փոխանակ գրելու «լուծուած» կամ «լուծած»՝ գրել լուծված. փոխանակ գրելու «խռովել», «գլորուել»՝ գրել, խռովել, գլորվել են:

Այս ընդհանուր կանոնից բացառութիւն անել միայն «Վ» հնչիւնի համար և գրել «և», քանի որ այս գիրը արդէն գոյութիւն ունի իւր յատուկ անկասկածելի «եվ» հնչիւնով: Սակայն օտարազգի բառերի տառադարձութեան մէջ, նոյնպէս և «և» բառը գլխադրով գրելու դէպքում՝ հետեւի ընդհանուր կանոնին և դրել «Եվրոպա», «Եվրոպական», «Եվ»:

Այս ուղղագրութեան և «ւ»-ով գրութեան մէջ այս գաղաղանութիւնը կայ, որ «ւ»-ով գրութեան հետևողները «վ» հնչիւնի համար գործ են ածում երկու գրութեան ձև, «վ» և «ւ». նրանք գրում են վան, բայց նաւ. գրում են վաղել, բայց աւագ. գրում են անփնաս, բայց անւանի, չնայելով որ այդ բոլոր բառերում էլ միևնոյն «վ» հնչիւնն է լսվում: Ուրեմն գրութեան այդ սխտեմին հետևողները «Վ»-ի նախկին գրութեան երեք ձևերի մէջ ընտրում մտցնել կամենալով՝ կանգ են առել կէս ճանապարհին, երեքը կրճատել՝ իջեցրել են երկուսի, դուրս դրելով «ու»-ով գրութիւնը: Եւ այս անկիւս՝ մի խոշոր սխալ են արել. «ու»-ի տեղ վ գործածելու փոխարէն (յօդուած — յօդված), գործ են ածել «ւ» (յօդուած — յօդւած), աչքաթող անելով այն հանգամանքը, որ «ւ»-ը մեր գրութեան մէջ անփոխարինելի պաշտօն է կատարում իբրեւ ձայնավոր՝ ու, իւ (յ, ւ) հնչիւնները կազմելիս, ուստի «ւ»-ին նոր բաղաձայնի (վ-ի) պաշտօն տալով՝ նրանք ավելի մեծ շփոթութիւն են ձգում այս գրի գործածութեան (գրութեան և արտասանութեան) մէջ, ինչպէս և այժմ դառն փորձը ցոյց է տալիս: Այն-ինչ «վ» անտարակուսելի հնչիւն ունի, և «ու»-ի տեղ «վ» գործածելը ոչ մի թիւրիացիութիւն չէր ծագեցնի *):

*) Իմ դասախօսութիւնից յետոյ, վիճաբանութեան ժամանակ, երբ ես դիմեցի պ. Աղայեանին ու հարցրի, թէ ինչո՞ւ նա «ւ» ընտրեց և ոչ «վ»

Ուրեմն «Ա»-ով գրութիւնը երկու հիմնական պահասութիւն ունի. նախ՝ «Վ»-ի բազմատեսակ գրութեան հարցը լուծում է ոչ լրիւ, այլ կիսակատար կ'երպով, և երկրորդ՝ որ լուծում է սխալ ճանապարհով, որ տեղիք է տալիս նոր սխալների և թիւրիմացութիւնների:

Իսկ «վ»-ով գրութիւնը ազատ է այս երկու պահասութիւններից ևս. նա «Վ»-ի բազմատեսակ գրութեան կնճռոտ հարցը լուծում է լրիւ, կատարելապէս, և լուծում է ուղիղ ճանապարհով: Եվ յիշեմ. եթէ «Վ»-ի ավանդական գրութեան երեք ձևերը հարկավոր է բարեփոխել, ինչո՞ւ համար կանգ առնել երկու ձևի վրայ, ինչո՞ւ համար մի հնչիւնին երկու գրութեան ձև յատկացնել, և ոչ մի: Միւս կողմից, եթէ «վ» հնչիւնն արտայայտելու համար մենք երեք ձևերի մէջ (վ, ու, լ) պէտք է ընտրութիւն անենք, ինչո՞ւ կանգ առնենք ու՛ի կամ լ՛ի վրայ, որոնք ուրիշ պաշտօն եւս ունին մեր այբուբենի մէջ, և չընտրենք «վ» գիրը, որ իւր անտարակուսելի միակ հնչիւնն ու դերն ունի մեր այբուբենի մէջ:

Ավանդական (պատմական) ուղղագրութեանը հս միշտ կողմնակից եմ եղել և եմ՝ ոչ այն պատճառով, որ նա ավանդական է, նվիրական է, անձեռնմխելի է, այլ որովհետեւ նա ամենուրեք ընդունւում է, միօրինակ գրութեան ձև է ամենքի համար: Ավանդական ուղղագրութեան ձեռք տալը, մասնավոր ինիցիատիւով, մի այնպիսի, սանձարձակութիւն կը մտցնէ ուղղագրութեան մէջ, որ նոյն լեզվով խօսող մարդիկ միմեանց գրածը ընդունակ չեն լինի կարդալու: Այս բանը բավական մանրամասն բացատրել էի դասախօսութեանս մէջ: Բայց երբ մի անգամ արդէն ձեռք է տրված ավանդական ուղղագրութեան, երբ գրութեան ցանկալի միօրինակութիւնը արդէն խախտված է, երբ ավանդական ուղղագրութեան բէֆօրմը անհրաժեշտ է դարձած՝ այդ բէֆօրմը պէտք է լինի արմատական, կատարեալ և ֆայտ, նա պէտք է լիովին բավականութիւն տայ կարիքին և անորոշութիւն ու թիւրիմացութիւն չծագեցնէ:

Այսպիսի յատկութիւններ ունի «վ»-ով գրութիւնը: Նրանով թէ՛ գրագէտը և թէ՛ կիսագրագէտը անսխալ կգրեն ու կը կարդան «վ» հնչիւնը մեր լեզվի մէջ, ավելորդ կդառնան բաղմամբիւ կանոնները, թէ՛ երբ պէտք է գրել վ, երբ ու, երբ լ. կատարելի ցանկալի սկզբունքը—մի հնչիւնին մի գիր: Իսկ

պ. Աղայեանը ժողովի ներկայութեամբ պատասխանեց. «որովհետեւ «վ»-ը մեծ գիր է»:

«Է»-ն գիրը, ազատվելով իւր շինքին փաթաթված բիւից՝ կը-
վերածվի իւր նախնական պաշտօնին. նա կգառնայ ձայնավոր
գիր, ինչպէս եղել է սկզբում, և կգործածվի «ու», «իւ» ձայ-
նավորները կազմելու համար, իսկ առանձին կգործածվի այն
դէպքերում, երբ հարկավոր լինի արտայայտել Ֆրանսիական
և հնչիւնը, օրինակ՝ Հւգօ (Hugo), Թւնի, Դւմա, Դւրան և
այլն:

Մեր առաջարկած ուղղագրութեան դէմ, որքան կարող
եմ նախատեսել և որքան պարզվել է ինձ համար այս առիթով
տեղի ունեցած վիճարանութիւններից՝ կարող են լինել մի
քանի, տեսական և գործնական, առարկութիւններ: Այս ան-
գամ ես կքննեմ այն բոլոր առարկութիւնները, որոնք ինձ
յայտնի են, թողնելով ապագային նորից վերադառնալ այս
հարցին՝ եթէ նոր, կարևորութիւն ունեցող առարկութիւններ
լինին:

Նախ և առաջ կարող են առարկել, և առարկել են, այս
հիմնական հայեացքի դէմ, իբր թէ ու-ով, ւ-ով և վ-ով գրվող
բառերի մէջ հնչիւնը միևնոյնն է—Վ, ուստի և պէտք է մի
գրով արտայայտել: Պնդում են ոմանք, որ նուրբ զանազանու-
թիւն կայ մի կողմից «նաւ» և «Աստուած» բառերի և միւս
կողմից «վան» և «վնաս» բառերի մէջ. առաջիններում լավում
է նուրբ, փափուկ վ, իսկ երկրորդներում ավելի թանձր, կոշտ
վ: Ուրեմն, ասում են, երբ արտասանութեան մէջ կայ մի
նուրբ զանազանութիւն՝ պէտք է որ նրանց գրութեան ձևն էլ
տարբեր լինի:

Դեռ մի բոլոր ընդունենք, թէ յիրավի կայ նուրբ զանա-
զանութիւն այդ երեք գրութեան հնչիւնների մէջ. այդ զանա-
զանութիւնը սակայն բաւական չէ՝ գրութեան երեք ձև ընդու-
նելու, (կամ գրութեան երեք ձևը պահպանելու): Այս յօգվածի
սկզբում ես բացատրեցի, թէ իւրաքանչիւր լեզու շատ ավելի
հնչիւններ ունի՝ քան գրեր այդ հնչիւններն արտայայտելու, և
բերի օրինակ «անարատ», «անբան», «անգամ» բառերը, որոնց
մէջ թէև միևնոյն «ն» գիրն է գործածվում, բայց երեքի մէջ
էլ նա տարբեր հնչիւններ ունի: Բանն այն է, որ այբուբենի
իւրաքանչիւր գիրը արտայայտում է մի որոշ հնչիւն, որ շատ
պարզ լավում է երկու ձայնավորի մէջ. սակայն այդ միևնոյն

հնչիւնը բազմատեսակ փոփոխութիւններ է կրում՝ նայելով թէ բառի մէջ որտեղ է գործածւում, բառասկզբում թէ բառավերջում, շեշտված թէ անշեշտ վանկում, և դարձեալ նայելով, թէ ինչ հնչիւններ են նրան նախորդում կամ յաջորդում: Եթէ վերցնենք միայն «ո» հնչիւնը և դիտենք նրան բառի մէջ զանազան դիրքով՝ պարզ կզգանք այս հնչիւնափոխութիւնը: «Ողորմող» բառի մէջ առաջին ո-ն լսվում է ինչպէս «վո», երկրորդը՝ ինչպէս կարճ «օ», իսկ երրորդը՝ գրութեամբ չարտայայտվող մի հնչիւն, որ սկզբից կամ վերջից (այլ և այլ դավաճներում) ստանում է մի կիսահագագ ձայնավոր կամ ընկամ հը, հէ:

Այսպէս նաև «հիս» (=վօ'խ) և «անոխակալ» (=անօխակալ). «հտք» (=վօ'տք) և ոտաց (=օտաց). «ձագ» (=ձաք) և ձագի. «մարդ» (=մարթ) և մարդու և այլ հազարավոր օրինակներ: Արդ՝ մենք այս դէպքերում զանազանակերպ չենք գրում, հետեւելով արտասանութեան նուրբ և երբեմն բավական զգալի տարբերութիւններին, այլ գրում ենք արմատական հնչիւնն արտայայտող գրով, թողնելով որ կարդացողն արտասանէ՝ ինչպէս բնական և սովորական է իր համար: Ուղղագրական այս սկզբունքին հետեւելով՝ պէտք չէ նոյնպէս գրութեան տարբեր ձևեր ընդունել «վ» հնչիւնի նկատմամբ՝ եթէ յիրավի նա նուրբ զանազանութիւն ունի («Աստուած», «նաւ» և «վնաս» տիպերի մէջ):

Գալով այն հարցին, թէ իրօք կա՞յ զանազանութիւն այս երեք տիպի բառերի «վ» հնչիւնի մէջ՝ ես, որքան կարող եմ զգալ՝ ոչ մի զանազանութիւն չեմ ըմբռնում «Աստուած» և «վնաս» բառերի մէջ. երկուսի մէջ էլ «վ» հնչիւնը ես նմանօրինակ եմ լսում. ուրիշ խօսքով՝ «Աստուած» կամ «աստված» նոյն հնչիւններն են պարունակում, ըստ իմ լսողութեան: (Ես չեմ խօսում զավառական արտասանութեան մասին, որ հնչում է գրեթէ ինչպէս «ուվ»—«աստուված», «տուվեց», որպիսի արտասանութեան արդարև չէ համապատասխանում «աստված» «տվեց» գրութիւնը, բայց նոյնչափ չէ համապատասխանում նաև «աստուած», «տուեց» գրութիւնը):

Ուրիշ բան է «հաւ», «աղնիւ» տիպի մէջ լսվող «վ» հնչիւնի հարցը: Այստեղ յիրավի «վ» ավելի փափուկ և նուրբ է, քան «վնաս» «վան» բառերի մէջ: Սակայն այս զանազանութիւնն առաջ է գալիս «վ» հնչիւնի գրութիւնից այդ երկու տիպի բառերի մէջ. «հաւ» «աղնիւ» բառերի մէջ վ նուրբ է լսվում ոչ այն պատճառով որ բնութեամբ նուրբ է, այլ այն պատ-

ձառով, որ բառավերջում է գտնվում, ուստի հնչիւնը խլանում է. եթէ գրենք «նաւ» և «նավ», «ազնիւ» և «ազնիրի», և բնական կերպով արտասանենք՝ կնկատենք, որ երկու գրութեամբ էլ մենք միևնոյն կերպ ենք արտասանում, այսինքն բառի վերջում «վ» հնչիւնը,—ինչ գրով էլ գրված լինի, միևնոյն է, —նուրբ է: Բառակ է: Իմանալու համար այդ բառերի մէջի «վ» հնչիւնի իսկական բնութիւնը՝ կազմենք այնպիսի ձևեր, որոնց մէջ այդ հնչիւնին ձայնավոր գիր յաջորդէ, օրինակ՝ ազնւական, նաւավար, և կտեսնենք, որ այստեղ նախկին նուրբ «ւ»-ը կատարելապէս նոյնանում է սովորական վ-ի հետ և հնչվում է ինչպէս ազնւական, նավավար:

Այս խորհրդածութիւնից դուրս է գալիս հետևեալ եղբակացութիւնը. «վ», «ու», «ւ» գրութեամբ բառերի մէջ «վ» հնչիւր իրապէս զանազանութիւն չունի. նոյն-իսկ եթէ լինի էլ նուրբ զանազանութիւն՝ նա բավական չէ երեք տեսակ գրութեան սխտեմը պահպանելու:

Երկրորդ առարկութիւնն այն է, որ եթէ ընդունվի ամենուրեք վ-ով գրութիւն՝ շատ անգամ բառի ուղղագրական կերպարանքը հարկ կլինի փոփոխել—բառի արմատական ձևը մի կերպ գրել, իսկ նրա հոլովական կամ ածանցի ձևը ուրիշ կերպ. օրինակ, կատու, բայց կատվի, կատվանման. Բագու, բայց Բագվայ, բագվեցի ևն: Այսպիսի դէպքերում գրութեան ցանկալի միակերպութիւն պահպանելու համար, ասում են, պէտք է գրել կատու, կատուի, բագուեցի. ևն:

Երևայթը ճիշտ է նկատված, բայց եղբակացութիւնը միանգամայն անընդունելի է:

Նախ այն ասենք, որ բառի արմատական ձևի և հոլովական կամ ածանցեալ ձևերի մէջ տարբեր ուղղագրութիւն շատ յաճախ է պատահում ոչ միայն մեր լեզվի, այլ և ուրիշ լեզուների մէջ. և դա բնական երևոյթ է,—երբ փոխվում է հնչիւնը՝ պէտք է փոխվի և գրութեան ձևը: Մենք գրում ենք սեր, բայց սիրու, սիրելի, սիրել. գրում ենք յավիտեան, բայց յավիտենական. գրում ենք քրիստոնէայ, բայց քրիստոնէութիւն. օր, բայց ավուր. գրում ենք ծառայ, ծառայի, բայց ծառաներ, ծառաների (առանց յ): Ռուսները գրում են Ծѣѣ, բայց Ծѣ-ЖИВЬ, ОТЕЦѢ, բայց ОТЕЦ (առանց օ): Ֆրանսիացիք գրում ենք avoir, բայց j'aurai. cheval, բայց chevaux. vive, բայց vif ևն: Այսպիսի բազմաթիվ օրինակներ մեր և օտար լեզուների մէջ ընդունված ուղղագրութիւնից ցոյց են տալիս, որ ոչ միայն ներքի է, այլ նոյն-իսկ սովորական կանոն է փո-

փոխել բառի արմատական ձևի ուղղագրութիւնը նրա թեք-
վածքներում, երբ հնչիւնը էական փոփոխութիւն է կրում:
Մենք գրում ենք, և բնական ենք համարում գրել, որդի, որ-
դեսէր, որդոս. առաջին ձևում կայ արմատական ի, երկրորդ
ձևում նա փոխվել է ե-ի (որդիասէր=որդեսասէր=որդեսէր).
երրորդ դէպքում. բոլորովին դուրս է ընկել, Ինչո՞ւ ուրեմն
խուսափենք նաև գրելուց կատու, կատվի, կատվանման, երբ
առաջին բառում լսում ենք զուտ ձայնավոր, իսկ յաջորդ եր-
կու բառերում զուտ բաղաձայն:

Եթէ մեր լեզվի ավանդական ուղղագրութեան մէջ պահ-
պանվել է կատու—կատուի գրութիւնը՝ այդ ոչ այն պատճա-
ռով է, որ կամեցել են միօրինակութիւն պահպանել բառի
արմատական և հոլովական ձևերի ուղղագրութեան մէջ, այլ
այն պատճառով, որ «ու»-ն ունեցել է երկու հնչիւն, ձայնավոր՝
և բաղաձայն վ. «կատու» ձևում «ու» կարդացել են իբրև ձայ-
նավոր, իսկ «կատուի» ձևում իբրև բաղաձայն վ:

Ես դեռ ավելի առաջ կգնամ և կպնդեմ, թէ ոչ միայն
ներքի ու կարելի, այլ ուղղակի անհրաժեշտ է գրել կատվի,
բազկեցի, փոխանակ գրելու կատուի, բազուեցի: Ամենքը կհա-
մաձայնին, որ մի այբուբենն չէ կարելի կոչել կատարեալ՝ եթէ
նրանով մենք չենք կարող մեր ցանկացած հնչիւններն արտա-
յայտել, կամ, երբ նրանով մենք մի հնչիւն ենք արտայայտում,
մինչդեռ ուրիշները կարգալիս ուրիշ կերպ են նրան արտասա-
նում. ընդհակառակը, այբուբենը կատարեալ կլինի այն ժա-
մանակ՝ երբ նրանով մենք կարող ենք մեր ցանկացած հնչիւն-
ներն արտայայտել, կամ երբ նրանով գրված իւրաքանչիւր
բառ ամեն մարդ միևնոյն կերպ է արտասանում:

Արդ՝ եթէ պահպանենք կատու—կատուի գրութիւնը, այս-
ինքն ընդունենք, որ որոշ դէպքերում (ձայնավորներից ա-
ռաջ) ու=վ՝ կզրկվինք հնարավորութիւնից գրել հայերէն գրե-
րով ցա, ցա, ցո հնչիւնները: Եթէ ես կամենում եմ գրել երեք
վանկանի մի անուն Սա-մու-էլ, երկու վանկանի անուն-
ներ Լու-ի կամ Ռու-ան՝ (Самуѣль, Луи, Руанъ)՝ հայերէն
կարգալ իմացողը կկարգայ առաջինը՝ իբրև երկվանկանի
Սամվէլ, երկրորդը և երրորդը՝ իբրև միավանկ Լվի, Ռվան:
Եթէ ես գրեմ «Դունայ»՝ մէկը կկարգայ «Դու-նայ» (գետը) և
միւսը Դըվ-նայ (ժողովը): Այսպէս էլ միշտ կլինի, քանի որ
գոյութիւն ունի լու—լուի (լվի), Բագու—Բազուայ (Բազվայ)
գրութեան ձևը: Ուրեմն հայերէնի ավանդական ուղղագրու-
թիւնը պահպանելով՝ մենք անկարող կլինինք արտայայտել «ու»

հնչիւնը՝ հետեող ձայնավորի հետ միասին: Իսկ եթէ դուրս ձգենք մեր ուղղագրութիւնից բոլոր այն ու-երը, որոնք լսվում են իբրեւ վ, այսինքն եթէ այդպիսի բաղաձայն ու-երը փոխարինենք վ-ով՝ այն ժամանակ ու-ն կմնայ միշտ իբրեւ ձայնավոր, և այն ժամանակ մենք առանց տատանվելու կգրենք Սամուէլ, Լուի, Ռուան, Դունայ, և առանց սխալվելու կկարդանք այդ բառերը ձայնավոր ու-ով:

Բոլորովին նոյնը պէտք է ասել և իւ-ի մասին. քանի որ նա կրկնակի հնչիւն ունի, իբրեւ «իվ» և իբրեւ ձայնավոր Խ՝ մենք միշտ սխալի մէջ կընկնինք ընթերցանութեան ժամանակ և չենք կարողանայ ուղիղ գրել: Հէնց այսօր ես կարդացի ռուսերէն հետեւեալ տողը. «Однажды профессоръ Дьюоръ ОБЪЯВИЛЪ»...—մի անգամ պրոֆէսոր ? յայտարարեց»... Ի՞նչպէս գրենք հայերէն այդ պրոֆէսորի անունը, որպէսզի հայը ուղիղ կարդայ. Դիւօր. բայց սա չի լինի. ամեն մի հայ կկարդայ Դիւօր: Ապա ի՞նչպէս գրել—ես չգիտեմ: Ես գիտեմ, որ չէ կարելի հայերէն գրել «Дьюоръ», «Дю-Дю» և այլն՝ քանի որ մենք շարունակենք «իւ»-ին երկու նշանակութիւն տալ, և՛ ձայնավորի, և բաղաձայնի: Իսկ երբ մենք իբրեւ կանոն ընդունենք միշտ գրել իվ՝ այն ժամանակ իւ գրութիւնը կմնայ լոկ իբրեւ ձայնավոր հնչիւն, և այն ժամանակ առանց դժվարութեան կգրենք Դիւօր, Դիւ-Լու, և անսխալ կկարդանք իբրեւ ձայնավոր. այն ժամանակ միամիտ կգրենք «Թիւ երեսիդ», վստահ լինելով, որ մեր ընթերցողը չի կարդայ «Թիվ երեսիդ»:

Մի երրորդ առարկութիւնն էլ հետեւեալն է.—«Ընդունում ենք, ասում են, որ «ւ»-ով գրութիւնը փոխանակ ու-ի՝ չարիք է, սխալ է, և եթէ չէ կարելի նախնական «ու» գրութիւնը պահպանել՝ թող գրենք նրա տեղ վ. (եթէ չենք կարող պահպանել «Աստուած» գրութիւնը՝ գրենք Աստված, փոխանակ Աստուած գրելու): Բայց գրութեան բոլոր սխառմի հետեողներն էլ, թէ ու-ականները, թէ լ-ականները և թէ վ-ականները, միաբան գրում են «նաւ», «ազնիւ», այսինքն՝ ձայնավորից յետոյ լավող վ-ն (բացի ու-ից յետոյ) բոլորը արտայայտում են լ-ով: Արդ՝ քանի որ վ հնչիւնի գրութեան այս կէտում տարաձայնութիւն, խառնաշփոթութիւն չկայ՝ ավելորդ է և վնասակար է այստեղ ևս մտցնել վ՝ լ-ի փոխարէն:

Այսպէս առարկողների նպատակն է՝ ավանդական ուղղագրութիւնը պահպանել գէթ մասամբ. մի հին, քայքայվող շինութիւն նորոգելու ձեռնարկելով՝ փլած կամ փլչելու մօտ ժառը նորոգել նոր ճաշակով ու յարմարութիւններով, իսկ մի

Թեք, որ դեռ կանգուն է, դեռ փուլ չէ գալիս՝ թողնել ինչպէս որ կայ—որով թէպէտ ծախսի խնայողութիւն կլինի, բայց կստացվի մի անձաշակ, խայտաբղէտ շինվածք՝ հնի և նորի խառնուրդ, մի մասը յարմարավոր, միւսը անյարմար:

Արդէն վերը բացատրեցի, որ «իւ» գրութիւնը պահպանելով թէ իբրև ձայնավոր և թէ իբրև բաղաձայն՝ ինչ անտեղութիւնների և շփոթութեան առիթ կտանք: Այս իսկ պատճառով պէտք է գրել «թիւ». «ազնիւ» ևն, որպէսզի «իւ» գրութիւնը մնայ միայն իբրև ձայնավոր: Եվ քանի որ էւ, ըւ հնչիւններ չունինք, իսկ ո-ից և օ-ից յետոյ գրում ենք վ—ով, օվ, իսկ «եւ»-ը գրում ենք պատրաստ «և» գրով՝ ուստի այդ առարկութիւնից հշանակութիւնը պահպանում է միայն «ԱՎ» հնչիւնը, որի համար առաջարկում են պահպանել «աւ» գրութիւնը փոխանակ ավ-ի:

Այսպիսի մի բացառութիւն անել միայն մի հնչիւնի գրութեան համար յօգուտ ավանդական ուղղագրութեան՝ միանգամայն անհասկանալի է, և առ հասարակ Վ-ի ուղղագրութեան մի մասը բարեփոխելու, իսկ միւսն ավանդական ձևով պահելու առաջարկութիւնը չէ արդարանում ոչ մի գիտական կամ գործնական պատճառաբանութեամբ: Ավանդական ուղղագրութիւնը պահելու միակ բանական պատճառն է՝ ցանկալի միօրինակութիւնը բոլորի համար. բայց երբ մի անգամ այդ միօրինակութիւնը չկայ, երբ Վ-ի եռատեսակ գրութեան խառնուրդ չենքը քայքայվել է՝ պէտք է վերանորոգութիւնը հիմնավոր ու կատարեալ լինի, որպէսզի մի քանի տարի յետոյ նորից հարկ չլինի նորանոր կարկատանների ու բարեփոխութիւնների: Հազար տարուց ավելի է, որ հայ ժողովրդի առողջ դատողութիւնը բողբոջում է մի հնչիւնը երեք կերպ արտայայտելու տարօրինակութեան դէմ, և դեռ Անիի արձանագրութիւնների մէջ, ինչպէս և նրանցից յետոյ, յաճախ պատահում ենք թագավոր, թվական ևն գրութիւններին:—«Դրանք կիսագրագէտ մարդկանց գրութիւններ են»,—կառարկեն ինձ: Բայց միթէ կիսագրագէտ էին և հ. Խնճիճեանը, Սայեաթ-Նովայի հրատարակիչ Հախվէրդեանը, Խորէն Ստեփանէն, լեզվագէտ Սարգիս Սարգսեանն և ուրիշները, որոնք գործ էին տնւում, կամ առաջարկում էին գործ ածել վ ամեն տեղ, թէ ու-ի և թէ լ-ի փոխարէն: Եվ վերջապէս ինչո՞ւ ստեղծենք կամ պահպանենք գրութեան այնպիսի սխտեմ, որ կիսագրագէտը մի տեսակ զրէ, իսկ զրագէտն ուրիշ տեսակ, կամ մէկը մի բան գրէ, իսկ ուրիշն ուրիշ բան կարգայ: Կարծում եմ՝ գրութեան պարզ,

գլխաւահասկանալի, անկասկածելի ձև ունենալն առ հասարակ ցանկալի է, և ամենից առաջ՝ կիսազրադէտին օգնելու համար, ընթերցանութիւնը նրան հեշտացնելու համար:

Դարձեալ առարկում են, թէ «Վ» հնչիւնի գրութեան մէջ առանց այն էլ տիրում էր խառնաշփոթութիւն. այժմ այս ուղղադրութիւնը մի նոր խառնաշփոթութիւն է ձգում, մի նոր հերձված է յարուցանում. յօնքը շինելու տեղ՝ աչքն էլ հանում է:

խառնաշփոթութիւն յիրավի տիրում է մեր «Վ» հնչիւնի գրութեան եղանակների մէջ: Դեռ մեր «հերձվածից» առաջ կային գրողներ — «գրուում-գրուել», «գրում-գրուել», «գրվում-գրուել», «գրվում-գրվել», «գրում-գրվել», «գրում-գրուել», այսպէս և ուրիշ դէպքերում: Նոյն-իսկ «ուղղափառները» տատանվում էին այս վեց ձևերից առաջին երեքի մէջ. մէկը մի տեսակ էր գրում, երկրորդը՝ ուրիշ տեսակ: Ես էլ, իբրև մէկը «ուղղափառներից»՝ առաջ գրում էի «գրուում-գրուել», յետոյ փոխեցի «գրվում-գրուել», այնուհետև «գրում-գրուել», վերջը դարձեալ՝ «գրվում-գրուել»: Ցանկալի է այդ խառնաշփոթութիւնը: — Չեմ կարծում, որ մէկը «այո» պատասխանէ: Ապա ի՞նչպէս վերացնել նրան: Այստեղ արդէն ամեն մէկը մի միջոց կառաջարկէ: Ոմանք կառաջարկեն վերականգնել նախկին, ավանդական ուղղադրութիւնը — «Աստուած», «նա», «վնաս»: Բայց սա անկարելի է. ոչ մի կերպով չէ կարելի համոզել և-ի հետևողներին (պարագլուխներին), որ թողնեն իրանց ընդունած և պաշտպանած գրութեան ձևը և դառնան նախկինին. և այս շատ բնական է. «Է»-ով գրութիւնը, ինչպէս և «վ»-ով գրութիւնը, լոկ կամայականութիւն չէ, քէֆի բան չէ, այլ անհրաժեշտաբար բղխում է «Վ» հնչիւնի երեք կերպ արտայայտելու անօրմայութիւնից և դրանից ծագած թիւրիմացութիւններից: Մի ուրիշը կառաջարկէ՝ հետևել «Է»-ով գրութեան: Բայց սա ոչ միայն սխալ է, այլ և մեծագոյն չարիքներ առաջ կբերէ, ինչպէս բավական բացատրված է իմ դասախօսութեան մէջ, որ զետեղված է յօդվածիս առաջին մասում: Եթէ ընդունվի և-ով գրութիւնը՝ դա մի 10—20 տարուց յետոյ անշուշտ առաջ կբերէ լեզուի միջոցով վ-ը, կամ կտեղծվին նոր գրեր՝ ձայնավոր ու, իւ հնչիւնների համար և վ-ը, իբրև ավելորդ գիր, դուրս կձգվի մեր այբուբենից:

Ուրեմն ի՞նչ անել: Ոմանք մտածում են. «Ես կփնամ իմ ուղղափառութեան մէջ» (թէպէտ այսպէս ասողները դարձեալ միմեանցից տարբեր գրութիւններ կգործ կածեն). «Իսկ ուրիշներն ինչ ուղում են՝ թող անեն»: Կամ թէ ասում են. «Մնանք

մենք ուղղափառ, որպէս զի միւսները, մեզ նայելով, դարձի գան, նորից ուղղափառութեան դառնան: Բայց այս կերպով հարցը չի լուծվի: Զէ՞ որ մեր մէջ դեռ տիրում էր ավանդական ուղղագրութիւնը՝ երբ առաջ եկաւ Լ-ական սիստեմը. ինչո՞ւ ուրեմն այն ժամանակ ավանդական սիստեմը չյաղթեց դեռ նոր երևան եկած կենտ-կենտ Լ-ով գրութեան. ինչո՞ւ, չնայելով հալածանքներին, Լ-ով գրութիւնը օրէցօր արծարծվեց և այսօր նոր սերունդի մէջ տիրապետող երևոյթ է դարձել: Զնայելով որ Ներս. դպրոցում ուսուցիչները պարտավոր են Լ-ով գրութիւնը միշտ ուղղել և վերածել ավանդական ուղղագրութեան՝ այնու ամենայնիւ աշակերտներից շատերը գրում են Լ-ով. և այս բաւական չէ. մի անգամ, մօտ ժամանակներս, հինգերորդ դասարանի մի աշակերտ գրել էր «ան-լախ», իսկ երեք աշակերտ գրել էին «դօրաւար»: Եւ ուղղեցի սխալները, բայց չմեղադրեցի աշակերտներին—Լ-ով գրութեան վերջը այս կլինի:—Պատճառն այն է, որ ավանդական գրութիւնը անօրմալ է, հակասում է մեր լեզվի մէջ տիրող հնչական սիստեմին, և եթէ մենք ներկայումս նրան չլուծենք բավարար կերպով, ինչպէս պահանջում է առողջ դատողութիւնը, ապա Լ-ը կտիրապետէ, առաջացնելով այն չարիքները, որոնց մասին քանիցս յիշել եմ այս յօդվածում:

Ոմանք էլ, ըստ էութեան ոչինչ չաւարկելով վ-ով գրութեան դէմ՝ մեղադրում են մեզանհետևողականութեան մէջ: «Եթէ, ասում են նրանք, դուք հետևում էք հնչական սիստեմին և այդ հիման վրայ մտցնում էք ամենուրեք վ գիրը, ուր որ Վ հընչիւնն է լսվում, ինչո՞ւ հետևողաբար չէք վարվում մեր լեզվի ուղղագրութեան միւս նմանօրինակ հարցերում ևս. մեր մէջ նման հնչիւններ ունին ներկայումս «ո» և «օ», «յ» և «հ», «ա» և «ը», «ե» և «չ». բառերի վերջում նման հնչիւններ ունին «ա» և «այ», «ո» և «ոյ»: Ինչո՞ւ սրանց գրութեան մէջ էլ չէք մտցնում միօրինակութիւն՝ հնչական սիստեմի ոգով: Կամ լիովին հետևեցէք հնչական սիստեմին, կամ յետ կանգնեցէք միայն Վ-ի վերաբերմամբ այդ սիստեմին հետևելուց»:

Այս մեղադրանքին պատասխանելու համար նախ պէտք է յիշեցնեմ իմ դավանանքա ուղղագրական կնճառոտ հարցերի նկատմամբ. այն է, որ ոչ ոք, և ոչ մի փոքրիկ խմբակ, իրան իրավունք չը պիտի համարէ ձեռներէց լինելու և լեզվի ընդունված ուղղագրութեան մէջ ըէֆօրմներ մտցնելու, որքան էլ զրանք խելացի և հիմնավոր լինին: Այսպիսի գործը պէտք է նախ յանձնել մասնագէտների քննութեան և ապա դանա-

դան Գրական շրջաններից, խմբագրութիւններից, դպրոցներից ուղարկված պատգամավորների բաղմամբ ժողովներում բնեւ մասնագէտների առաջարկած բարեփոխութիւններն, և ընդունելուց յետոյ պարտավորաբար ամենուրեք գործադրել:— «Վ»-ի գրութեան ըէֆօրմը, որ մտցնվում է գործածութեան մէջ մի խմբակի նախաձեռնութեամբ, չէ հակասում այս իմ դավանանքին, որովհետեւ այդ հնչիւնի ուղղագրութիւնն արդէն խախտված է հիմնովին, և ներկայումս տիրում է նրա նկատմամբ բարեկոնեան խառնակութիւն. ամեն մարդ իր սեփական ճաշակին է հետեւում, գրում և տպում է՝ ինչպէս քէֆն է ուզում: Հարցը կանոնավորելու համար ժողով պումարելու առաջարկութիւնս մոռացութեան տրվեց, իսկ չարիքն օրէցօր արծածվում էր: «Վ»-ի գրութեան մէջ ըէֆօրմ մտցնելու նախաձեռնութիւնը չէ պատկանում «Արօր»-ի խմբագրութեանը, այլ նրանց՝ որոնք ւական սխտեմը մտցրին: Մեր ուղղագրութիւնը մի անհրաժեշտ հակադեղ է՝ ւական սխտեմի չարիքը վերացնելու համար:

Այսպէս չէ սակայն «յ» և «հ», «ե» և «է» ևն հնչիւնների վերաբերմամբ: Կան յիշավի գավառներ (կամ ավելի ճիշտ ասելով՝ բարբառներ), որտեղ այդ զոյգ հնչիւնները միմեանցնուման են արտասանվում. բայց նախ՝ որ այդ երևոյթը տեղական է և ոչ ընդհանուր հայկական, ուրեմն և չէ կարելի տեղական արտասանութեան զոհ բերել ընդհանուր հայկական արտասանութիւնը. և երկրորդ՝ որ չնայելով այս կամ այն զոյգ հնչիւնների նման արտասանութեանը՝ գրականութեան մէջ այնու ամենայնիվ տիրում է միատեսակ ուղղագրութիւն: Եթէ այս կամ այն բարբառում «յաջող» բառը արտասանվում է ինչպէս «հաջող», բայց և այնպէս բոլորը միատեսակ գրում են յաջող: Եթէ մի ուրիշ գավառում արտասանում են «առչ»՝ այնու ամենայնիվ բոլորը միաբան գրում են «արչ»: Ուրեմն վերը յիշված հնչիւնների վիճակը բոլորովին այլ է՝ քան Վ-ինը. այն զոյգ հնչիւնները տարբեր արտասանութիւններ ունին զանազան գավառներում, բայց, ինչպիսի և լինին այդ արտասանութիւնները՝ նրանց ուղղագրութիւնը ամեն տեղ միօրինակ է. այն-ինչ «Վ» հնչիւնը («ու», «ւ», «վ»-ով գրված բառերում) ամեն տեղ միատեսակ Վ է, իսկ գրութեան ձեւը տարբեր, և ավելի քան տարբեր—քառասական և կամայական: Ուստի «ո» և «օ», «յ» և «հ» ևն հնչիւնների ուղղագրութեան մէջ ըէֆօրմ մտցնելու հարցը շատ զգուշալի է. նախ պէտք է հաշիվ տալ, թէ ճիշտէ արդօք, որ «յ»-ն «ո»-ն և այլ հնչիւնները փոխվել, դարձել են

«հ», «օ», և երկրորդ՝ եթէ յիբավի փոխված լինին (որ դժվար թէ կարելի լինի ապացուցանել) անհրաժեշտ է փոխել ամենուրեք տիրող միատեսակ ուղղագրութիւնը:

Վերջապէս գալով բառավերջի անձայն «յ»-ին (ծառայ, վրայ)՝ թէ և շատ բան կարելի է ասել այդ գիրը պահելու կամ չպահելու նկատմամբ՝ բայց ներկայ նիւթից չհեռանալու նպատակով բավականանում եմ ասելով այսքան, թէ այդ գրի բառավերջում գրվել կամ չգրվելը ոչ մի ազդեցութիւն չի ունենայ ճիշտ գրելու և ճիշտ կարդալու վրայ. թէկուզ ոմանք գրեն «վրա», միւսները «վրայ»՝ գրութեան այս տարբերութիւնը չի ազդի ոչ նոյն «յ» գրի վրայ բառասկզբում կամ բառամիջում, և ոչ ուրիշ գրերի հնչիւնի վրայ. այն-ինչ Վ հնչիւնի գրութեան մէջ տիրող խառնաշփոթութիւնը մեզ վերջիվերջոյ անընդունակ կդարձնէ որոշ հնչիւններ գրելու և որոշ գրութիւններ ուղիղ և ճիշտ կարդալու:

Կայ վերջապէս և մի առարկութիւն—միակ անկեղծը, թէ վ-ով ուղղագրութիւնն անսովոր է, աչք է ծակում:

Ուղիղ է այս դիտողութիւնը: Բայց միթէ սա պատճառ պէտք է լինի վ-ով գրութիւնը մերժելու, թէկուզ սա օրինավոր է, պարզ է, հեշտ է և ընդունակ է վերացնելու բոլոր երկ-պատակութիւնները Վ հնչիւնի գրութեան նկատմամբ և առաջն առնելու գալիք թիւրիմացութիւնների: Խավար տեղից յանկարծ լոյսի մէջ տեղափոխվող մարդու համար էլ լոյսն անսովոր է և աչք է ծակում: Հին և հասարակ զգեստ հագնողն էլ, երբ նոր ու փառավոր զգեստ է հագնում՝ սկզբում քաշվում է, անսովոր է զգում այդ զգեստը: Առաջին անգամ ակնոց գործածող մարդն էլ սկզբում շատ անսովոր է զգում այդ և կարծում է, թէ բոլորը մատով իր վրայ են ցոյց տալիս: Բայց և այնպէս ամեն ոք ձգտում է դէպի լոյսը, խորթում է փառավոր զգեստից, չէ խորչում ակնոց դնելուց՝ յաղթելով աչք ծածկելու, անսովորութեան առաջին զգացմունքին և գիտակցելով նրանց օգտակարութիւնը, զեղեցկութիւնն ու կարիքը: Աշխարհիս երեսին ոչ մի ըէֆօրմ չէր իրականանայ՝ եթէ մարդկութիւնն առաջնորդվելու լինէր անսովորութեան երկիւղով:

Վ-ով գրութեան դէմ այս առարկութիւնն անողները մոռանում են, որ մեր լեզուն անցեալ դարերում շատ անգամ ուղղագրական ըէֆօրմների է ենթարկվել, որոնցից ամեն մէկն իր ժամանակ անշուշտ անսովոր է եղել և աչք է ծակել: Մի ժամանակ բոլոր հայերը գործ էին ածում «աւ» այն տեղերում ուր մենք այժմ գրում ենք «օ». այսպէս՝ գրում էին «աւր»,

«աղաւթել», «արաւը» «Պաւղոս»: Ներսէս Շնորհալին այբու-
բենի գրերի շարքով յօրինած աղօթքը գրում էր «Աւրհնեմք
ըզքեզ... Բարձեր ձեռօք... Գըլուխն ոտից... Դարձեալ ասեմք»...
Այժմ մենք առանց երկրայելու, միամիտ սրտով գրում ենք
«օդ», «աղօթել», «արօր», «Պօղոս», «օրհնեմք ըզքեզ» են,
նոյն-իսկ գրաբար հեղինակներ տպկլիս: Հին ձեռագիրներում
մենք միշտ հանգիպում ենք «առնեաք», «ուտելի», «խաւսելին»
են գրութեան, «ե» գործածած այնտեղ՝ որտեղ մենք այժմ
«է» ենք գրում: Հին ժամանակ միշտ գրում էին «եր-
կեւդ», «հարեւր» «եւդ», «բեւր» են, այն-ինչ մենք այժմ ան-
կտակած կերպով՝ գրում ենք «երկիւղ», «հարիւր» «իւր»,
«բիւր» են: Այս և սրանց նման օրինակները ցոյց են տալիս,
թէ մեր նախնիք չեն հրաժարվել ուղղագրութեան մէջ ըէֆօրմ-
ներ մտցնելուց՝ անսովորութեան առաջ վարանելով: Կարիքը,
հեշտութիւնը, պարզութիւնը նրանց առաջնորդել են՝ գրու-
թեան մէջ այս կամ այն նորութիւնը մտցնելու, թէպէտ իրանք
էլ անշուշտ զգում էին նորութեան անսովորութիւնը կամ յար-
ձակումների ենթարկվում հակառակորդների կողմից: Եվ մենք
այսօր անաշխատ, հանգիստ սրտով վայելում ենք նրանց աշ-
խատանքի պտուղը, օգտվում նրանց մտքրած ըէֆօրմներից:
Այդ՝ միթէ մեր լեզվի մէջ ուղղագրական ըէֆօրմներ մտցնելու
իրավունքը միայն հին սերունդներին էր տրված. միթէ մենք
այժմ զրկված ենք՝ մեր լեզուն մեր կարիքներին յարմարե-
ցնելու իրավունքից: Միթէ մենք խուլ ու կոյր պիտի մնանք
բողոքող կարիքի առաջ և չմտցնենք անհրաժեշտ նորոգութիւն-
ներ՝ լոկ այն պատճառով որ դրանք նոր են, անսովոր են,
աչք են ծակում: Այսպիսի վեհերոտութեամբ մենք ցոյց
կտայինք, թէ մենք, հին սերունդների համեմատութեամբ, ա-
վելի յետաճեալ ենք լեզվի կարիքները հասկանալու և նրանց
դարձման տանելու գործում: Եթէ մենք համոզվում ենք, որ
«Լ» հնչիւնի գրութեան նախկին ավանդական ձևը (Աստուած,
նաւ, վնաս) վերականգնել անհնար է և ավելորդ է. որ ներ-
կայումս այդ հնչիւնի գրութեան մէջ տիրող խառնաշփոթիւնը
ցանկալի չէ՝ որ Լ-ի հետզհետէ տարածվելը մեզ պիտի ստիպէ
մօտիկ ապագայում նոր գրեր ստեղծել ձայնավոր «ու» և «իւ»
հնչիւնների համար և դէն ձգել «վ»-ը իբրև ավելորդ գիր. որ
«վ»-ով գրութիւնը բոլոր այդ անպատեհութիւնների առաջն
առնում է և միաժամանակ նա հեշտ է, պարզ և օրինավոր —
այն ժամանակ մենք չպէտք է կանգ առնենք անսովորութեան
առաջ, պէտք է գործածենք նրան այս լիուլի գիտակցու-

թեամբ, որ դրանով մենք մի մեծ դիւրութիւն ենք մտցնում մեր ուղղագրութեան մէջ: Անսովորութիւնը շատ կարճ կտեւէ. կանցնի երկու-երեք ամիս, և մենք այնքան բնական կհամարենք այդ գրութիւնը, որ կգարմանանք, թէ ինչպէս մինչև այժմ չէինք նկատել ու գործադրել այդ պարզ ու դիւրին ուղղագրութիւնը:

Հարկավոր է վերջապէս և մի քանի խօսք ասել մի ուրիշ մեղադրանքի առիթով, որ վերջին օրերս մամուլի մէջ արվեց, թէ երբ ամեն մի տեղից վեր կեցող մի նոր ուղղագրութիւն մտցնէ մեր գրութեան մէջ՝ դրանով ավելի և ավելի կմեծանայ վիհը մեր և տաճկահայերի լեզվի և գրականութեան մէջ:

Այս մեղադրանքն եթէ ոչ ամբողջապէս, գոնէ մասամբ ուղղված է և մեր առաջարկած ուղղագրութեան դէմ: Այս մեղադրանքն լսելիս՝ միտքս եկավ Կրիլովի առակի ջրաղացպանը, որ ծուլացավ ժամանակին կարկատել ջրաղացի առվի պատառվածքը. երբ սակայն պատառվածքը մեծացավ, ջուրը դուրս սկսեց հոսել և ջրաղացը կանգնեց՝ ջրաղացպանը նոր գնաց պատճառն իմանալու, և տեսնելով որ հավերը առվից ջուր են խմում՝ զարկեց նրանց սպանեց, կարծելով թէ նրանք սպառեցին ջուրը և ջրաղացը կանգնեցրին: Կրկնակի սխալ գործեց ջրաղացպանը—մեղքը անմեղի վրայ ձգելով և ի գուր տեղը օգտակար թոչուչներն սպանելով՝ ի վնաս իրան:—Վէնով գրութիւնը մեր և տաճկահայերի լեզվի ու գրականութեան մէջ բացված վիհում նոյնքան դեր կարող է կատարել, որքան խեղճ հավերը ջրաղացի կանգնելում. և մենք վիհի դէմ կովելով երեսակայական վնասի պատճառով իրական օգուտից կզրկվինք, ջրաղացպանի պէս վարված կլինինք:

Վիհը, այս, կայ, կար և այն ժամանակ՝ երբ այնտեղ էլ, մեզ մօտ էլ միևնոյն ուղղագրութիւնն էր տիրում. կլինի և այսուհետև, թէկուզ դարձեալ մի ուղղագրութեան հետևելու լինինք երկու կողմերս էլ: Վիհը փորելու մէջ ուղղագրութիւնը դեր չէ կատարում. կան շատ խոշոր, խոր պատճառներ: Սրանց մասին մի ուրիշ անգամ առիթ կունենամ խօսելու:



A $\frac{11}{1889}$